



N հ-11/13-349

«11» 11 2013 թ.

Երևանի Կոմիտասի անվան պետական  
կոնսերվատորիայի ռեկտոր պարոն Շ.Շահինյանին

Հարգելի՛ պարոն Շահինյան,

Ձեզ ենք ուղարկում փորձագիտական խմբի զեկույցի նախնական տարբերակը: Խնդրում ենք երկու շաբաթվա ընթացքում՝ մինչև նոյեմբերի 25-ը ներառյալ, գրավոր ներկայացնել Ձեր համաձայնությունը կամ առարկություններն ու դիտողությունները «ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկի» 5.3.2. ենթամասի պահանջներին համապատասխան:

«Եթե ուսումնական հաստատությունը զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ունի դիտողություններ և՛ առարկություններ, ապա պետք է հիմնավորի՝

- մանրամասն բացատրելով խնդրահարույց կետերը,
- ներկայացնելով հստակ փաստեր,
- հղումներ կատարելով փորձագիտական զեկույցի համապատասխան բաժիններին,

- վերաշարադրելով անհրաժեշտ մասերը:

ՄՈՒՀ-ը առարկություն և դիտողություն կարող է անել միայն հաստատությանը վերաբերող փաստերի ու տեղեկատվության վերաբերյալ: Այլ ճշգրտումներ ընդունելի չեն:»


Առդիր՝ 55 էջ.

Հարգանքով՝

Տնօրեն

Ռ. Թոփյան

Կատարող՝ Ա.Ութմազյան  
Հեռ. 22-91-45






ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ԶԵԿՈՒՅՑ**

**ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ  
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

*/նախնական տարբերակ/*


ԵՐԵՎԱՆ – 2013





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| I. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ.....  | 3  |
| II. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....                                       | 3  |
| III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ ..... | 6  |
| IV ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ .....   | 7  |
| V. ՓՈՐՁՆԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ .....                                      | 10 |
| I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....  | 10 |
| II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....  | 13 |
| IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....  | 21 |
| V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.....                                     | 25 |
| VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ .....   | 29 |
| VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....  | 33 |
| VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....  | 36 |
| IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ.....  | 40 |
| X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.....  | 42 |
| ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ .....  | 45 |
| VI. ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ.....                             | 46 |
| ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՄԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ.....                                     | 48 |
| ԱՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ.....                                      | 53 |
| ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ .....  | 55 |



## I. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ<sup>1</sup>

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) ենթակառուցվածքային հավատարմագրման ինքնավերլուծության արտաքին գնահատումն իրականացրել է հետևյալ փորձագիտական խմբը.

1. **Գուրգեն Հովհաննիսյան**, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի պետական համալսարանի ուսումնամեթոդական վարչության բակալավրիատի բաժնի վարիչ /փորձագիտական խմբի ղեկավար/
2. **Աննա Երզնկյան**, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի ղեկան
3. **Գրգեգորշ Կուրզինսկի**, Կոնսերվատորիաների Եվրոպական ասոցիացիայի (AEC) հավատարմագրման հանձնաժողովի անդամ, Վրոցլավի Կարլ Լիպինսկի երաժշտական ակադեմիայի նախկին ռեկտոր / Լեհաստան/
4. **Միստ Զոռկեղոստիո**, Իսլանդիայի արվեստների ակադեմիայի երաժշտության ֆակուլտետի ղեկան, Կոնսերվատորիաների Եվրոպական ասոցիացիայի (AEC) Որակի բարելավման կոմիտեի նախագահ
5. **Սոնա Տեր-Մինասյան**, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գեղարվեստական կրթություն» ֆակուլտետի երաժշտության բաժնի մագիստրատուրայի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի քարտուղարության ղեկավար Անահիտ Ութմազյանը, աշխատանքներին որպես դիտորդ մասնակցել են ՈԱԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար Անուշավան Մակարյանը և Անի Մկրտչյանը:

Թարգմանությունը կատարվել է Ալինա Խաչիկյանի կողմից:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները ստորագրել են գաղտնիության և անկախության հավաստագիրը:

## II. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### *Նախապատրաստական փուլ*

2012թ. մարտի 12-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ՈԱԱԿ-ին դիմել է փորձնական ենթակառուցվածքային հավատարմագրման համար՝ ներկայացնելով դիմումը, լիցենզիայի պատճենները և համապատասխան հավելվածները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:


ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ուսումնասիրել է ներկայացված փաստաթղթերի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ դիմումում նշված տվյալները, հավելվածները և կոնսերվատորիայի կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Հիմք ընդունելով 2012թ. ապրիլի 2-ին կայացված դիմումն ընդունելու մասին ՈԱԱԿ-ի որոշումը կազմվել և ապրիլի 18-ին ստորագրվել է եռակողմ պայմանագիր ՈԱԱԿ-ի, ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի և ԵՊԿ-ի միջև:

Կազմվել է հավատարմագրման գործընթացի ժամանակացույցը, որը համաձայնեցվել է հաստատության հետ և հաստատվել:

2013 թ. հուլիսին ՀՀ ԿԳ նախարարության և «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի որոշմամբ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի փորձնական

<sup>1</sup> ՀԱՎԵԼՎԱԾ 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականները



ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը հետաձգվել է «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային 2-րդ ծրագրի հաջորդ փուլ: Անհրաժեշտությունից ելնելով 2012 թ. օգոստոսի 2-ին կնքվել է եռակողմ պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր, համապատասխանաբար փոփոխվել է գործընթացի ժամանակացույցը, համաձայնեցվել է հաստատության հետ և հաստատվել:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Գոնսերվատորիայի ինքնավերլուծությունն իրականացրել է ռեկտորի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծության վերաբերյալ ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով նշանակված հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո ՈԱԱԿ-ը հուլիսի 12-ին կայացրել է որոշում այն ընդունելու մասին:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այցի ժամանակ պարզաբանման ենթակա խնդիրներն ու հարցերը, ինչպես նաև որոշվեցին հանդիպումների համար թիրախային խմբերը:

### *Նախնական այց*

Գործընթացի համակարգողը, վերհանված ուսումնասիրման ենթակա հարցերի և խնդիրների հիման վրա, փորձագիտական խմբի հետ կազմել է այցի ժամանակացույց<sup>2</sup>, որը համաձայնեցվել է հատատության հետ համակարգողի և խմբի ղեկավարի կողմից իրականացված նախնական այցի ժամանակ: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ, Գյումրու մասնաճյուղ ռեսուրսների ուսումնասիրություն և այլն: Ներկայացվեց նաև լրացուցիչ ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը:

Նախնական այցի ժամանակ այցելեցին փորձագիտական խմբի աշխատանքների համար նախատեսված անհրաժեշտ սարքավորումներով կահավորված սենյակը, ինչպես նաև հանդիպումների իրականացման համար դահլիճը:


### *Փորձագիտական այց*

Փորձագիտական այցն իրականացվեց ս.թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը:

Փաստացի այցին նախորդող օրը փորձագիտական խմբի բոլոր անդամները հանդիպեցին ՈԱԱԿ-ում: Հանդիպման նպատակն էր միջազգային փորձագետների հետ կիսվել նախնական տպավորություններով, քննարկել և համաձայնեցնել այցի շրջանակներում ուսումնասիրման ենթակա խնդիրներն ու փաստաթղթերը, թիրախային խմբերի հանդիպումները, գնահատման շրջանակը:

Այցին մասնակցեց փորձագիտական խումբն ամբողջությամբ, ներառյալ համակարգողը, թարգմանիչը, դիտորդները:

<sup>2</sup> ՀԱՎԵԼՎԱԾ 2. Փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի ժամանակացույց





Այցի ընթացքում փորձագիտական խումբն ունեցավ ժամանակացույցով նախատեսված հետևյալ հանդիպումները.

- ռեկտորի,
- ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի,
- պրոռեկտորների (2 հանդիպում), ուսումնական մասի պետի,
- դեկանների և ուսումնական գործընթացի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների,
- տեղացի և արտասահմանցի ուսանողների,
- պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների,
- ամբիոնի վարիչների,
- ՈւՆ և ՈւԳԸ ներկայացուցիչների,
- գործատուների ներկայացուցիչների,
- շրջանավարտների,
- որակի ներքին ապահովման բաժնի հետ:

Փորձագիտական խումբը պատահականության սկզբունքով ընտրեց թիրախային խմբերի ներկայացուցիչներին, որոնց հետ պետք է հանդիպեր:

Փորձագետներն իրականացրեցին ռեկտորատի, ամբիոնների, ուսումնական մասի և ՈՆԱ բաժնի տրամադրած փաստաթղթերի ուսումնասիրություններ<sup>3</sup>:

Խումբն իրականացրեց նաև ռեսուրսների դիտարկում<sup>4</sup>, լսարաններ, կաբինետներ, գրադարան, ընթերցասրահ, ձայնադարան, օպերային ստուդիա, ազգային նվագարաններ, ֆուկլորագիտության լաբորատորիա, «Երաժիշտ» թերթի և «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրություն:

Ռեսուրսների դիտարկման շրջանակում փորձագիտական խումբն ունկնդրեց տեղացի և արտասահմանցի ուսանողների մի շարք կատարումներ, ներկա գտնվեց օպերային ստուդիայում կատարվող փորձին:

Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական խումբը հոկտեմբերի 3-ին այցելեց Գյումրի՝ ԵՊԿ մասնաճյուղ, որտեղ ունեցավ հանդիպումներ մասնաճյուղի տնօրենի, վարչական և ուսումնական մյուս կազմի, ուսանողների, դասախոսների հետ, դիտարկեցին ռեսուրսներ /ձայնադարան, գրադարան, ճաշարան/, ունկնդրեցին մասնաճյուղի սաների կատարումներ:

Այցի ժամանակացույցով նախատեսված հանդիպումները բավականին լավ էին կազմված և կազմակերպված հաստատության անձնակազմի կողմից: Այդ պատճառով խումբը կարողացավ տեղավորվել այցի համար նախատեսված ժամանակացույցի սահմաններում:

Տարբեր հարցազրույցների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվեցին այցի վերջում կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ:


### **Փորձագիտական զեկույց**

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, կիրառվել է գնահատման երկաստիճան սանդղակ՝ (1) չի համապատասխանում չափանիշին, (2) համապատասխանում է չափանիշին:

Այցից հետո խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստեցին Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն արձագանքեցին, և նրանց մեկնաբանությունները հաշվի առնվեցին զեկույցի ամփոփման ժամանակ: Հավատարմագրման զեկույցն ընդգրկում է հիմնական արդյունքներն ըստ

<sup>3</sup> ՀԱՎԵԼՎԱՄ 3. Ուսումնասիրված փաստաթղթերի ցանկ

<sup>4</sup> ՀԱՎԵԼՎԱՄ 4. Փորձագիտական խմբի այցերը





չափորոշիչների, դատողությունը, եզրակացությունը և խորհրդատվությունները՝ ըստ չափանիշների:

Վերջնական զեկույցը, որը հավանության է արժանացել խմբի բոլոր անդամների կողմից, ներկայացվել է համալսարանին սեպտեմբերի [ամսաթիվ]-ին:

Զեկույցը ներառում է և՛ համալսարանի փորձնական հավատարմագրման գործընթացի, և՛ գործընկերային գնահատման արդյունքները միջազգային չափանիշների հիման վրա:

### III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՄԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան համաշխարհային հանրության առջև ներկայանում է որպես սեփական դեմք, սեփական ազգային ձեռագիր ունեցող Հայկական ազգային երաժշտական բուհ, որը հայ երաժշտության և ընդհանուր առմամբ հայկական մշակույթի հետ կապված յուրահատուկ ստեղծագործական խնդիրներ է լուծում:

Կոնսերվատորիան իր կարևորագույն խնդիրն է համարում ուսանողների մեջ ազգային ավանդույթների հանդեպ հարգալից վարաբերմունքի, նրանց կողմից ազգային արմատների խորագնի յուրացման և, վերջին հաշվով, ազգային մշակույթի կրողի գիտակցության դաստիարակությանը:

Կոնսերվատորիայի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացված արտերկրի հայաբնակ կենտրոնների և առհասարակ, հայկական սփյուռքի հետ կապերին:

ԵՊԿ-ն ապահովում է ՀՀ երաժշտական արվեստի բնագավառի ողջ պահանջարկը, հանդես է գալիս իբրև ազգային հոգևոր մշակութային ժառանգության պահպանող, զարգացնող և տարածող, կրթում կադրեր՝ պահանջված և մրցունակ՝ միջազգային աշխատաշուկայում, գիտական ասպարեզում պահում բարձր վարկանիշը և այլն:


Ներկայումս Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 3 ֆակուլտետներում ուսանում է ավելի քան 1000 ուսանող: ԵՊԿ-ում ուսում են ստանում շուրջ 160 օտարերկրյա ուսանողներ: ԵՊԿ-ի գլխամասը գտնվում է Երևանում, իսկ մասնաճյուղը՝ Գյումրիում:

Որոշումների կայացման կանոնակարգված ընթացակարգը հաստատված է համալսարանի կառավարման համակարգի միջոցով:

ԵՊԿ-ի կառավարման մարմիններն են Կոնսերվատորիայի Կառավարման Խորհուրդը, ռեկտորի կողմից ղեկավարվող Գիտական խորհուրդը, որտեղ առնվազն 25%-ն ուսանողներ են, իսկ ՊԴ կազմի ներկայացուցիչները կազմում են մեծամասնություն, ինչպես նաև Ռեկտորատը և Ուսանողական խորհուրդը:

ԵՊԿ-ի՝ 600-ից ավելի հիմնական դասախոսական կազմի մեծամասնությունն ունի գիտական, ՀՀ և միջազգային պատվավոր կոչումներ, շքանշաններ, պատվոգրեր, գիտական աստիճաններ և այլն: Կոնսերվատորիան իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն «Երաժշտական արվեստ» մասնագիտության 3 հիմնական կրթական ծրագրերով՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճանների շնորհումով: Բացի նշված հիմնական կրթական ծրագրերից, ԵՊԿ-ն առաջարկում է նաև լրացուցիչ կրթական ծրագրեր:

2011 թ. կազմավորվեց որակի ներքին ապահովման բաժինը: Մշակվեց կենտրոնի քաղաքականությունն ու ռազմավարությունը, ինչպես նաև կանոնակարգերն ու ընթացակարգերը, որոնք ուղղված են հաստատության տարբեր միավորների կողմից իրականացվող աշխատանքների որակի գնահատմանը:



## IV ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

### *Փորձնական ենթակառուցվածքային հավատարմագրում*

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ներկայացրած ինքնավերլուծությունը մանրամասն ուսումնասիրելուց և հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումներ ու հարցազրույցներ ունենալուց հետո փորձագիտական խումբը գալիս է այն եզրակացության, որ ԵՊԿ-ն համապատասխանում է Մասնագիտական կրթության պետական հավատարմագրման տասը չափանիշներից մեծամասնությանը՝ բացառությամբ մեկի. միջազգայնացմանը վերաբերող չափանիշը դեռևս չի համապատասխանում:


### *Ուժեղ կողմեր*

Բռնի ինքնավերլուծության ուսումնասիրությունը և փորձագիտական այցը թույլ են տալիս փաստել, որ ԵՊԿ-ի ուժեղ կողմեր են համարվում.

- ԵՊԿ-ն ընդհանուր առմամբ լավ կառուցվածք ունեցող կազմակերպություն է հստակ սահմանված առաքելությամբ:
- ԵՊԿ –ի ներգրավվածությունը երաժշտական միջավայրի ստեղծման գործում:
- Բարեփոխումներին վճռական տրամադրված առաջադեմ ղեկավար կազմի առկայությունը:
- Մասնագիտական բարձր որակավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմ, որն ընդգրկված է կրթական ծրագրի կազմման և ուսանողների ուղղորդման գործընթացներում:
- Կրթական ծրագրի համար նախանշված վերջնարդյունքները համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, ունի լավ կառուցված ուսումնական պլաններ:
- Հետազոտության արդյունքները լայնորեն օգտագործվում են ուսուցման գործընթացում:
- Ուսանողների ներգրավվածությունը բոլոր մակարդակներում: Ուսանողների ձայնը լսելի է, և նրանք ազդեցություն ունեն որոշումների կայացման վրա:
- ԵՊԿ-ի ուսանողների ակտիվ մասնակցությունը տարբեր երաժշտական կոլեկտիվների կազմում՝ միջազգային տարբեր փառատոներին, մրցույթներին, համերգներին:
- Կոնսերվատորիան սահմանափակ բյուջեով կարողացել է ստեղծել ուսումնական բավարար միջավայր, որը ներառում է գրադարան, հագեցած ձայնադարան, ֆուլկլորագիտության կաբինետ, օպերային ստուդիա, հրատարակչություն, և այլն ...:
- Սեփական թույլ կողմերի գիտակցումը և դրանք շտկելու ու բարելավելու պատրաստակամությունը:

### *Թույլ կողմեր*

- Պրոֆեսորադասախոսական կազմի բարձր տարիքային ցենզր: Աշխատակազմի ծերացումը կարող է հանգեցնել ծրագրերի իրականացման և դասավանդման մեթոդաբանության կոնսերվատիվիզմի:
- Ուսումնական պլանները ճկուն չեն, դրանցում թույլ է արտահայտված կամընտրականությունը: Դրանք դեռևս հնարավորություն չեն տալիս միջազգայնացմանը:
- Կրեդիտային համակարգի դեռևս ոչ լիարժեք ներդրումը:
- Նախանշված կրթական վերջնարդյունքների և գնահատման միջև կապը հստակ չէ:
- Միջազգային գործունեության ֆինանսավորման բացակայությունը:



- ԵՊԿ շենքային պայմաններն այս պահին թեև բավարար են, սակայն կարող են խոչնդոտել հաստատության հետագա զարգացմանը՝ համերգասրահի, մարզադահլիճի, հանրակացարանի բացակայությունը, երաժշտական գործիքների մակարդակը պետք է լինի շատ ավելի բարձր:
- Գյումրու մասնաճյուղը:
- Արտաքին շահակիցների ազդեցությունը սահմանափակ է:

#### *Խորհրդատվություններ*


- Անհրաժեշտ է ավելի բաց լինել աշխարհին. միջազգային բենչմարքինգի իրականացման, արտաքին շահակիցների ազդեցության, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական ու ուսանողական կազմերի ներկայացուցիչների միջազգային շարժունության ապահովման համար:
- Անհրաժեշտ է օպտիմալացնել բուհի կառուցվածքը, դասախոսական կազմը:
- Որակի մշակույթի ձևավորման համար ապահովել ավելի շատ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, հատկապես դասախոսական կազմի:
- Անհրաժեշտ է ապահովել կառավարման համար տվյալների բավարար համակարգը, ցանկալի է, որ դա կատարվի թվայնացված եղանակով:

#### *Գործընկերային գնահատում ըստ միջազգային չափորոշիչների*

Փորձագետներն իրականացրել են նաև միջազգային չափորոշիչների հիման վրա գործընկերային գնահատում, որի արդյունքում կատարվեցին մի շարք դիտարկումներ, և տրվեցին խորհրդատվություններ ԵՊԿ՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ինտեգրվելու ուղղությամբ:

#### *Դիտարկումներ*

1. Ուսումնական հաստատությունը միանշանակորեն գտնվում է անցումային փուլում:
2. Պրոֆեսորադասախոսական կազմը բավականաչափ բաց չէ երաժիշտների համար առկա կարիերայի այլ հնարավորությունների հարցում:
3. Ուսումնական պլանների մշակումը համեմատաբար պահպանողական է:  
Պրոֆեսորադասախոսական կազմը պետք է որդեգրի որոշակի լայն (արտաքին փորձը հաշվի առնող) մոտեցում ուսումնական պլանների բովանդակությունն ու իրականացման մեթոդները սահմանելիս:
4. Չկա միջազգայնացման ռազմավարություն (հատկապես արտասահմանյան ուսանողների հավաքագրման): Դասախոսները որոշակի չափով ծավալում են միջազգային համագործակցություն, բայց նրանց գործողությունները ոչ պաշտոնական են:
5. Հաստատությունում կա որակի բարելավման բաժին, որն ունի երկու աշխատակից: Սա, որոշ առումով, երաշխավորում է որակի շարունակական բարելավման գործընթացի կայունությունը, պարզապես անհրաժեշտ է տրամադրել բավարար ֆինանսավորում:
6. Այս բուհի ամենաուժեղ կողմերից մեկը հետազոտական գործունեությունն է հայկական՝ ավանդական և ժամանակակից երաժշտության ոլորտում: Գիտական և ստեղծագործական




հետազոտությունը բավականաչափ զարգացած է: Ժողովրդական երաժշտության ամբիոնում իրականացվող տպավորիչ հետազոտական գործունեությունը պետք է գնահատել:

Գործընկերային խորհրդատվություններ

Փորձագիտական խմբի խորհրդատվությունները հիմնականում վերաբերում են հետևյալ խնդիրներին՝ կրթական ծրագրի արդիականացում, շրջանավարտների հետ կապի ամրապնդման, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում, հաստատության միջազգայնացում, հետազայում ներդրումների կատարում միջազգայնացման, որակի ապահովման ուղղությամբ:

Փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը հաստատում են, որ այս զեկույցն արտացոլում է փորձագիտական խմբի կարծիքն ու եզրահանգումները: Փորձագիտական խումբը վերլուծել է զեկույցը և համաձայն է զեկույցում ներկայացված եզրակացությունների հետ: Խմբի անդամները հաստատում են, որ գնահատումն իրականացվել է անկախության սկզբունքի պահանջներին համապատասխան:


Գուրգեն Հովհաննիսյան  
ղեկավար



Անահիտ Ութմազյան

փորձագիտական խմբի քարտուղար/համակարգող







I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

**ՉԱՓՈՂՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է որակավորումների ազգային շրջանակին:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, որպես ազգային դերակատարությամբ երաժշտական մշակույթի կրթական, գիտական և ստեղծագործական եզակի հաստատության, հիմնական առաքելությունը բարձրագույն կրթության բոլոր մակարդակներով երաժշտական կրթություն ապահովելն է:

Հաստատության ռազմավարական հիմնական նպատակները երեքն են՝ ապահովել բարձրորակ կրթություն, իրականացնել բարձրակարգ հետազոտություն և նորարարություն, հանրային ներգրավում և ծառայություններ:

Կոնսերվատորիան խթանում է երաժշտական արվեստի զարգացումը և նպաստում ազգային հոգևոր մշակութային արժեքների պահպանմանը, զարգացմանը և տարածմանը:

Կոնսերվատորիան միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթօջախ, պատրաստելով ժամանակի պահանջներին համապատասխան բարձրորակ արվեստագետ – մասնագետներ:

Կոնսերվատորիան իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության 3 հիմնական կրթական ծրագրեր՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճանների շնորհմամբ:

Բուհի նպատակներից են ապահովել ուսումնառություն-դասավանդում-գիտություն կապը, ինչպես նաև՝ դառնալ Արևելք-Արևմուտք կապող օղակ՝ ստանձնելով տարածաշրջանի առաջատարի դերը:

Մահմանված առաքելությունը հստակ ձևակերպված չէ, այն հաճախ կրում է նկարագրական բնույթ:

**ՉԱՓՈՂՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Ներքին և արտաքին շահակիցների կարիքները վերհանելու նպատակով ԵՊԿ-ն պարբերաբար անցկացնում է հարցումներ, կազմակերպում է խմբային լայն քննարկումներ, որոնց արդյունքները ներկայացվում են ռեկտորին, քննարկվում է գիտխորհրդում և, առաջնորդվելով դրանց արդյունքներով, կայացնում համապատասխան որոշումներ: Ներքին շահակիցների կարիքների վերհանման նպատակով ՈՆԱԲ-ը մշակել է նրանց շրջանում հարցումների անցկացման մեթոդաբանություն՝ տեղեկատվության ստացման մեթոդների ընտրություն, գործիքների մշակում:

ԵՊԿ-ի 2012-2017 թթ ռազմավարական ծրագրի մշակման գործընթացում՝ 2011-2012 թթ-ին Որակի ներքին ապահովման Բաժնի կողմից իրականացվել է ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրություն կազմակերպվել են խմբային քննարկումներ վարչական կազմի ներկայացուցիչների, ուսանողների, դասախոսների, գործատուների, շրջանավարտների և մասնաճյուղի աշխատակազմի հետ: Ռազմավարական ծրագիրը ստեղծվել է առաջին հերթին Կոնսերվատորիայի բազմամյա հաստատված ավանդույթների, միջավայրի

Handwritten signature  
M. K. ...  
Handwritten signature

գործունեների զարգացման իրատեսական գնահատականների և Բոլոնիայի պահանջներին համապատասխանեցման սկզբունքի հիման վրա:

**ՀԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքները՝ ըստ բուհի, գնահատվում են Ռազմավարական ծրագրի նպատակներից բխող համապատասխան քայլերի առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշների, որոնք ներկայացված են ՌԾ-ի կարճաժամկետ և երկարաժամկետ ժամանակացույցով:

Թեև Կոնսերվատորիայի Կառավարման Խորհուրդը և Գիտական խորհուրդը պարբերաբար, իսկ Ռեկտորատը՝ ըստ անհրաժեշտության, իրենց նիստերում քննարկում են վերոնշյալ ծրագրերի իրականացման կատարողականը, կատարում անհրաժեշտ ճշգրտումներ և ընդունում համապատասխան որոշումներ, սակայն բուհի առաքելությունը գնահատելու և բարելավելու համար պաշտոնական ընթացակարգ և մեխանիզմներ դեռևս չկան:

ԵՊԿ-ի որակի շարունակական բարելավման խնդիրների իրագործումը դրված է բուհի ՈՆԱԲ-ի վրա:

### **ՂԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ.**

ԵՊԿ-ն հստակ առանձնացնում է գործունեության առարկան և նպատակները, որոնք իրականացվում են ԵՊԿ-ի կանոնադրությամբ:

Արվող փոփոխությունները նպաստում են ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան, ինչպես նաև որակավորումների ազգային և եվրոպական շրջանակին և Բոլոնիայի պահանջներին համադրելի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը:

Ինքնավերլուծության զեկույցում ներկայացված առաքելությունը միշտ չէ, որ հստակ է: Երբեմն դա ավելի մոտ է նկարագրության, թե բուհը ինչ է անում կամ ցանկանում անել (*այսինքն՝ մատուցել կրթություն և խթանել մշակույթին*): Կարելի էր ապահովել առավել լիարժեք համապատասխանություն բուհի ներկայիս ու ապագայի նպատակների և ղեկավար կազմի ձգտումների միջև, ինչպես նաև կրթական ծրագրերի, հետազոտության և հասարակությանը մատուցվող ծառայություններին առնչվող նպատակների և գործընթացների միջև: *Այդուհանդերձ այն համապատասխանում է Որակավորումների ազգային և եվրոպական շրջանակին (EQF):*

Ներքին և արտաքին շահակիցների կարիքները վերհանելու նպատակով պարբերաբար անցկացվում են հարցումներ: Նման մոտեցումը լինելով շահակիցների հետ հաղորդակցման ինստիտուցիոնալ մեխանիզմ, արդյունավետ է այնքանով, որ նպաստում է այդ հաղորդակցության կայացմանը և արդյունքների հիման վրա որոշումների ընդունմանը:

ԵՊԿ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատումը կատարվում է Կառավարման խորհրդում ռեկտորի տրված տարեկան հաշվետվության տեսքով: Քանի որ բուհի խորհրդում ներկայացված են արտաքին և ներքին շահակիցներ, ուստի համարվում է, որ շահակիցները իրազեկված /ներգրավված/ են ՌԾ-ի կատարողականին, ունեն հնարավորություն քննարկելու և գնահատելու այն: Իրականում, բուհը հաշվետվության մեջ չի ներկայացրել առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու քաղաքականությունը և այլն: Վերջիններս, ըստ հաշվետվության, առաջիկայում պատրաստվում են բուհի ՈՆԱԲ-ի կողմից և դրանք արտացոլված են այդ կառույցի աշխատանքային պլանում:

ԵՊԿ-ի գործունեության գնահատման, ռազմավարական ծրագրի գնահատման համապատասխան փորձի պակասը, ըստ ինքնավերլուծության, ևս թույլ չի տվել լիարժեք գնահատելու առաքելության ու նպատակների իրականացման արդյունքները: Դրան

29

W. B. ...

...

խանգարում է նաև ՌԾ-ի պարբերաբար մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը: Սակայն բուիը դրանք դիտարկում է իր թույլ կողմերից մեկը և, բնականաբար, առաջիկայում ձեռնամուխ կլինի դրանց վերանայմանը և բարելավմանը:

ՌԻսուսմանական հաստատությունը որպես արտաքին վտանգ դիտում է՝ «ԵՊԿ-ի Ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների ձևավորման և իրականացման մեջ արտաքին շահակիցների ոչ բավարար հետաքրքրվածությունը»: Կարծում ենք վտանգը նվազագույնի կհասցվի, եթե ՌԾ-ի մշակման ժամանակ արտաքին շահակիցները գործուն մասնակցություն ունենան, հաշվի առնվի աշխատաշուկայի պահանջները:

Բուիում շահակիցների շրջանում որակի մշակույթը դեռևս ձևավորման փուլում է գտնվում: ԵՊԿ-ի հիմնախնդիրներից է ուսանողների և դասախոսների շրջանում վերացնել անվտանգությունը՝ բուիի բարելավման, այսինքն՝ առաքելության և նպատակների իրականացման գործընթացի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ չափանիշ 1-ի SWOT վերլուծությունը կատարված է օբյեկտիվորեն, սակայն առանձին դեպքերում վերլուծության նյութը չի վերաբերվում տվյալ չափանիշին:

Որպես տարածաշրջանային առանձնահատուկ գործառույթներ ունեցող ԲՈՒՀ, իմաստ ունի, որ Գյումրու մասնաճյուղը ունենա սեփական առաքելությունը:

### ***Եզրահանգում***

Չնայած երաժշտական մասնագիտական գործունեության համար ժամանակակից անբարենպաստ պայմաններին, ԵՊԿ-ն շարունակում է հետևել իր բազմամյա առաքելությանը՝ փնտրելով առկա խնդիրների լուծման նոր ուղիներ:

Չափանիշի դրական գնահատականը պայմանավորված է այն բանով, որ բուիի վարած քաղաքականությունը և ծավալված գործունեությունը համապատասխանում են բուիի առաքելությանը, որն էլ իր հերթին համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին: Փորձագիտական խումբը գտնում է, որ չափանիշը կարելի է գնահատել բավարար, սակայն չափանիշի շրջանակում բուիը դեռևս անելիքներ ունի:

***ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. Բուիի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են Չափանիշ 1-ի պահանջները:***

### ***Խորհրդատվություններ.***

1. Անհրաժեշտ է մշակել հստակ և հակիրճ առաքելություն, որը կարտացոլի բուիի իրական ձգտումը՝ լինելու կամուրջ արևելյան և արևմտյան Եվրոպայի մշակույթների միջև, տարածաշրջանային նշանակության կենտրոն, տարբեր մշակույթների խաչմերուկ (իսլամական, արևմտյան, արաբական, պարսկական), հայաստանյան երաժշտության և երաժշտական ավանդույթների դեսպանն աշխարհում, ինչպես նաև պահպանելով և զարգացնելով դասական երաժշտության կատարման լավագույն ավանդույթները:
2. Անհրաժեշտ է առաքելության մեջ առանձին ձևակերպում տալ ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղի համար կամ հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատուկությունները մասնաճյուղի համար առանձին առաքելություն սահմանել:
3. ՈՆԱԲ-ի հարցումների անցկացման ընթացակարգն ունի լրամշակման կարիք: Հարցման թերթիկներում հարցադրումներն առավելագույնս մոտեցնել բուիի առաքելությանը, ռազմավարական ծրագրին:
4. Բուիը կարիք ունի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման ընթացակարգերի, ՌԾ-ի պարբերաբար մշտադիտարկման մեխանիզմների:

Paul

Un. by subject

Paul



## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Ու ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՉՍՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ ա.** *Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի կառավարումն իրականացվում է համաձայն ՀՀ իրավական ակտերի և Կոնսերվատորիայի Կանոնադրության, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, Կոնսերվատորիայի Կառավարման Խորհրդի, Գիտական խորհրդի և Ռեկտորատի գործառնությունների իրականացմամբ:

ԵՊԿ-ի կառավարման համակարգը, նրա կարողությունները և փոխներգործությունները որոշված են բուհի Կանոնադրությամբ և չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

Բուհի կառավարման բարձրագույն մարմինը ԵՊԿ-ի Կառավարման Խորհուրդն է: Այն ձևավորվում է պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից և հաստատվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:

ԵՊԿ-ի ընդհանուր կառավարումն իրականացնում է ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ Գիտական խորհուրդը, ռեկտորի նախագահությամբ:

Բուհի ուսումնական, ստեղծագործական և գիտահետազոտական գործընթացներն ապահովող հիմնական ստորաբաժանումներն են ԵՊԿ-ի ֆակուլտետները և ամբիոնները:

ԵՊԿ-ի ենթակառուցվածքներից է նաև Գյումրու մասնաճյուղը, որը գործում է համաձայն ԵՊԿ-ի Կանոնադրությանը:

ԵՊԿ-ի բոլոր ենթակառուցվածքների գործունեությունը կարգավորվում է համաձայն Գիտական խորհրդի կողմից հաստատված կարգերի:

Կոնսերվատորիայի կազմակերպական փոխներգործակցությունն ապահովվում է համապատասխան լոկալ փաստաթղթերի և կառավարման օպերատիվ միջոցների շնորհիվ: Կրթական ու այլ նպատակների իրականացման համար բուհն ունի սահմանափակ նյութական և ֆինանսական ռեսուրսներ, ապահովված է անհրաժեշտ կադրային ներուժով:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ բ.** *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կառավարման բոլոր մարմիններում ընդգրկված են դասախոսներ և ուսանողներ, ինչը սահմանված է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով և հիմնադրի կողմից հաստատված ԵՊԿ-ի Կանոնադրությամբ:

Ուսանողների և դասախոսների մասնակցությունը կառավարման մարմիններում կանոնակարգված է, ընտրությունն իրականացվում է համաձայն գործող ընթացակարգի՝ ներքևից վերև:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ գ.** *ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:*



Mr. [unclear]





**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի առաքելությանն ու նպատակներին համապատասխան, որպես երկարաժամկետ պլանավորում, մշակվել է 5-ամյա (2012-2017թթ.) Ռազմավարական ծրագիր՝ հաստատված ԵՊԿ-ի Խորհրդի կողմից:

Ռազմավարական ծրագրի հետ հաստատվել է նաև 2012-2017 թթ. ՌԾ-ի իրականացման ժամանակացույցը, որում ներկայացվում է ծրագրի նպատակներից բխող խնդիրների լուծման քայլերը: Ժամանակացույցը պարունակում է թե՛ երկարաժամկետ, թե՛ միջնաժամկետ, թե՛ կարճաժամկետ պլանավորումը: ԵՊԿ-ի Ռազմավարական ծրագրի Ժամանակացույցում հստակ ներկայացված են յուրաքանչյուր նպատակի և խնդիրների իրականացման համար պլանավորված քայլերի իրականացման վերջնաժամկետները, պատասխանատուն և կատարողականի ցուցիչը, որը մշտադիտարկման հնարավորություն է տալիս:

Ռազմավարական ծրագրի կատարողականը և իրականացման արդյունավետությունը ներկայացվում է ԵՊԿ-ի ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ, որն ներկայացվում և գնահատվում է Կառավարման Խորհրդի նիստում:

Գործողությունների տարեկան ծրագրի իրականացման արդյունքների ամփոփումից և վերլուծությունից հետո պլանավորվում են հաջորդ տարվա գործողությունները, որոնք ԵՊԿ-ի Ռազմավարական ծրագրի իրականացման և մշտադիտարկման միակ մեխանիզմն է:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՂ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն իր յուրահատկությամբ ունի լայն հնարավորություն հետադարձ կապ հաստատելու իր շրջանավարտների, արտաքին շահառուների հետ:

Բացի այդ, ԵՊԿ-ի գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով բուհի շրջանավարտների և գործատուների շրջաններում անցկացվում են հարցումներ (հարցազրույցներ, հանդիպումներ)՝ պարզելու համար նրանց բավարարվածությունը Կոնսերվատորիայում ուսանողների ստացած գիտելիքներից և կարողություններից: Իսկ ներքին գործոնների ուսումնասիրման համար անցկացվում են անկետային հարցումներ ուսանողության շրջանում՝ պարզելու համար նրանց բավարարվածությունը ուսումնական ծրագրերից, դասախոսներից, գրադարանային սպասարկումից, ադմինիստրացիայից և լսարանների վիճակից: Հարցումներից ստացված տվյալների վերլուծության արդյունքների հիման վրա իրականացվում են բարելավմանն ուղղված քայլեր:

Հարցումները հիմք են ծառայում Կոնսերվատորիայի գործունեության արդյունավետության ու որակի գնահատման համար և օգտագործվում են բուհի գործունեության որակի վրա ազդող արտաքին ու ներքին գործոնների վերլուծության համար, SWOT վերլուծության թույլ և ուժեղ կողմերի, արտաքին հնարավորությունների և սպառնալիքների բացահայտման նպատակով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն սկսած 2011թ.-ից՝ Որակի ներքին ապահովման բաժնի հիմնադրումից ի վեր, որդեգրել է որակի կառավարման PDCA՝ «Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում» բուհի կառավարման նոր քաղաքականությունը:

ԵՊԿ-ի կառավարման գործունեությունը որոշող փաստաթուղթը ԵՊԿ-ի հնգամյա Ռազմավարական ծրագիրն է, որն իրականացվում է ըստ մշակված, Գիտական խորհրդում քննարկված և Կառավարման Խորհրդի կողմից հաստատված միջոցառումների Ժամանակացույցի:

ԵՊԿ-ի ուսումնական ստորաբաժանումները (մասնաճյուղ, ֆակուլտետ) գործում են համաձայն իրենց ռազմավարական ծրագրերի:

  
Mr. E. J. [unclear]  


ԵՊԿ-ի կառուցվածքային մյուս ստորաբաժանումները (ամբիոն, հրատարակչություն, օպերային ստուդիա, բաժին) իրենց գործունեությունն իրականացնում են տարեկան աշխատանքային պլանների միջոցով:

Կոնսերվատորիայի գործունեության ընդհանուր գնահատումն իրականացվում է տարեկան գործունեության վերլուծության և հաշվետվությունների միջոցով՝ ըստ գործունեության տարբեր ոլորտների համար նախանշված ցուցանիշների: Գնահատվում են արձանագրված առաջընթացն ու հաջողությունները, ինչպես նաև բացահայտվում են թերություններն ու բացթողումները:

Թերությունների վերացման և գործունեության բարելավման համար կատարվում են համապատասխան փոփոխություններ հաջորդ տարվա աշխատանքային պլանում, դրանով իսկ ապահովելով Կոնսերվատորիայի գործունեության բարելավման գործընթացը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն փորձում է մշակել և ներդնել գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման գնահատման մեխանիզմներ:

Հաստատությունը կիրառում է տեղեկատվության հավաքագրման տարբեր եղանակներ և հրապարակում է արդյունքները: Գործում է մշտական հանձնաժողով, որը մշակում է կարգեր, ընթացակարգեր, հիմնվելով կրթության որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշների վրա: Այդ հանձնաժողովում իրավաբան-խորհրդատուի ու ՈՆԱԲ-ի աշխատակիցների համագործակցությամբ ձևավորվել է անհրաժեշտ, բայց դեռևս բացակայող կանոնակարգող փաստաթղթերի ցանկը, որոնց հիման վրա առաջիկայում կձևավորվեն դրանք:

Բուհի հավատարմագրման գործընթացի շրջանակում հավաքագրվել և վերլուծվել է մեծ ծավալի տեղեկատվություն՝ ստացված ուսանողների, շրջանավարտների, գործատուների և այլ շահակիցների շրջանում անցկացված հարցումների միջոցով:

Տարբեր ստորաբաժանումների ինքնավերլուծության արդյունքները հնարավորություն են տվել գնահատել արձանագրված առաջընթացն ու հաջողությունները, բացահայտել թերացումներն ու բացթողումները, մշակել դրանք վերացնելու գործողությունների պլան:

Մեխանիզմների արդյունավետությունը դեռ դժվար է գնահատել:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ում ներկայումս առկա են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակման մի շարք միջոցներ /ՌԾ-ը, ուսանողների ու շրջանավարտների հաջողությունները միջազգային տարբեր փառատոններում և մրցույթներում, Եվրոպական Կոնսերվատորիաների Ասոցիացիայի (AEC) կայք-էջ, ԵՊԿ-ի Որակի բաժնի կողմից կազմած բազմատիրաժ ուղեցույցներ, «Երաժիշտ» թերթում հրապարակվող նյութեր, «Երաժշտական Հայաստան» ամսագիր/:

Մակայն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները բացակայում են

A handwritten signature in cursive script, appearing to be the name "W. K. Mills".

W. K. Mills

A second handwritten signature in cursive script, which is more stylized and less legible than the one above.



## **ՂԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ.**

Դատելով ԲՈՒՀ-ի կառուցվածքից, թվարկվող կանոնակարգային փաստաթղթերից և հավելվածում ներկայացվող կանոնակարգերից, ակնհայտ է, որ բուհում առկա է անհրաժեշտ իրավական հիմքը՝ արդյունավետ կառավարում իրականացնելու համար:

Բավականին հանգամանալից գրված բուհի կանոնադրության կողքին գործում են կառուցվածքային առանձին միավորների կանոնակարգեր /կանոնակարգում կարելի է փոքրացնել մանրամասները՝ կառուցվածքային միավորների մասով/:

Դատելով բուհի կառուցվածքից և դասախոս-ուսանող հարաբերակցությունից, ԲՈՒՀ-ը ապահովված է անհրաժեշտ կադրային ներուժով: Դժվար է դատել, թե դրանք որքանով են նպաստում բուհի առաքելության և նպատակների իրագործմանը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ բուհում ձեռնամուխ են եղել կառուցվածքային բարեփոխումների, այդ կապակցությամբ ռեկտորի հրամանով ստեղծվել է համապատասխան հանձնաժողով /ռեկտորի 05.09.13 1920-Ն հրաման/:

Հաստատության կառավարման և վարչական կառուցվածքը արտացոլում են ղեկավարման արդյունավետ և էթիկայի նորմերին համապատասխան կառավարման գործընթացներ, որոնք համապատասխանում են բուհի նպատակներին:

Ներքին շահակիցները բավականին ակտիվորեն կարողանում են մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, օգտագործելով կառավարման մարմիններում իրենց ներգրավվածությունը: Բուհի կառավարման բոլոր օղակներում ներկայացված են ներքին շահակիցների ներկայացուցիչները:

ՌԾ-ն ունի ժամանակացույց, որը պարունակում է տարբեր տևողության պլանավորումներ /մշտապես իրականացվող գործընթացներ և գործընթացներ՝ ըստ կիսամյակների/: Պլանավորման և դրա իրագործման արդյունավետությունը կարելի է գտնել միայն ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ:

Բուհը, դեռևս, նոր է անցում կատարում բարձրագույն երաժշտական կրթության նոր մոտեցմանը՝ համապատասխան Բոլոնիայի գործընթացին: Այն հնարավորություն չի ունեցել մշտադիտարկելու երկարատև պլանավորումը, այնուամենայնիվ, կարճատև պլանավորման և մշտադիտարկման գործընթացներն առկա են:

Բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար գլխավորապես կիրառվում են հարցազրույցներ, հանդիպումներ և հարցումներ, որոնք պետք է համարել հավաստի տեղեկատվություն:

Բուհը չի անդրադարձել վերջին երեք տարիներին իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքներին և դրանց արտացոլմանը ռազմավարական ծրագրում:

“Պլանավորում, ստուգում, վերանայում, բարելավում” սկզբունքը կիրառվում է բուհի ղեկավարության կողմից, մասնավորապես, Ռրակի ապահովման կենտրոնի հիմնադրումից ի վեր: Ռրակի կառավարման մեխանիզմների կիրառումը նոր գործընթաց է, հետևաբար մեխանիզմները դեռևս լիովին չեն գործում, քանի որ շրջափուլը չի ավարտվել:

Բուհի ՄԿԾ-ի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ մեծածավալ տեղեկատվությունը հավաքագրվել և հավաքագրվում է շահակիցների շրջանում անցկացված հարցումների միջոցով: Տեղեկատվության կարևոր աղբյուր են ծառայել նաև տարբեր ստորաբաժանումների ինքնավերլուծությունները:

Հաստատությունը կիրառում է տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գնահատման տարբեր եղանակներ, սակայն դեռևս մշակված չեն գնահատման հստակ մեխանիզմները: Մշակված չեն նաև հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող կանոնակարգված գործուն մեխանիզմները:

*Եզրահանգում.*

3p  
M. E. ...  


Հաստատության կառավարման և վարչական կառուցվածքը արտացոլում են ղեկավարման արդյունավետ և էթիկայի նորմերին համապատասխան կառավարման գործընթացներ, որոնք համապատասխանում են բուհի նպատակներին:

ԵՊԿ-ի կառուցվածքը ընդհանուր առմամբ համապատասխանում է բուհի գործառնությանին խնդիրներին և Կանոնադրությանը: Բուհի կառուցվածքը բարելավման փուլում է գտնվում: Այս առումով բուհը դեռ անելիքներ ունի:

Բուհում առկա կառավարման միավորները հիմնականում լավ են գործում: Ապահովված է տեղեկատվության տարածումը կառավարման ամենաբարձր խորհրդից մինչև վարչություններ: Ուսանողների ներկայացուցչականությունը կարևորվում է բոլոր մակարդակներում: Առկա են հարցումներ և այլ մեխանիզմներ, այնուամենայնիվ, սա նոր փորձառություն է, և, հետևաբար, չկան շատ փաստեր, թե ինչպես է բուհը օգտագործում այդ մեխանիզմները որակյը բարելավելու համար:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.** *Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են Չափանիշ 2-ի պահանջները:*

*Խորհրդատվություններ.*

1. Անհրաժեշտ է վերանայել հարցումները և գտնել ուղիներ, որոնք թույլ կտան վերհանել բուհի նպատակների և իրական վիճակի միջև առկա հակասությունները, շտկել դրանք և ամրապնդել բուհի ուժեղ կողմերը:
2. Անհրաժեշտ է մշակել բուհի կառավարման և վարչարարության որակի ապահովման ընթացակարգեր:
3. Անհրաժեշտ է մշակել բուհի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
4. Բուհը կարիք ունի գտնել տեղեկատվության տարածման արդյունավետ միջոցներ: Այդ նպատակով լայնորեն պետք է օգտագործել կայք-էջը:

### III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** *ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն իր առաքելությանը համահունչ իրականացնում է կրթություն «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ, որն ունի 5 մասնագիտացում: Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչները՝ ուսումնական պլանն ու առարկայական ծրագրերը համապատասխանում են ԿԳՆ-ի կողմից հաստատված պետական կրթական չափորոշիչին: Ուսումնական պլանն ու առարկայական ծրագրերը դեռևս ավանդական են և շարունակում են մնալ դասախոսակենտրոն:

Շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքներն ամրագրված են հաստատության բակալավրի և մագիստրոսի դիպլոմի հավելվածներում (Diploma supplement):

2007թ. ԵՊԿ-ում անցում է կատարվել ուսուցման կազմակերպման եվրոպական կրեդիտային համակարգի (ECTS), որը սակայն դեռ լիարժեք չի կիրառվում:

Handwritten signature or initials, possibly including the name "M. Kelly".



**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ.** *ՄՈւՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի, իբրև կրթական ծառայություններ մատուցող կազմակերպության, հիմնախնդիրն է Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ դասավանդման և ուսումնառության որակի և արդյունավետության շարունակական բարձրացմանը նպաստավոր պայմանների ապահովումը:

ԵՊԿ-ի կրթական ծրագրերում ընդգրկված դասընթացների առարկայական ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին: Առարկայական ծրագրերը դեռևս նկարագրված չեն ըստ ակնկալվող արդյունքների՝ գիտելիք, հմտություն, կարողություն:

Ծրագրերում ներկայացված են դասավանդման մեթոդները, իսկ որպես ուսումնառության մեթոդներ՝ հատկապես մասնագիտական կարողությունների ձևավորման համար, դիտվում են ինքնուրույն առաջադրանքի կատարում՝ անհատական պարապմունքներ, տնային վարժանքներ, երաժշտական կատարումների համեմատական ունկնդրում (վերլուծություն), որի մասնաբաժինը հստակ արձանագրված է ուսումնական պլանում: Դասավանդման մեթոդները նույնպես հիմնականում ավանդական են:

Անհատական ուսուցման քաղաքականությունն երաշխավորում է դասավանդման և ուսումնառության մեթոդների միջև համապատասխանությունը հատկապես մասնագիտական առարկայական ոլորտում:

Բակալավրի կրթական ծրագրում բավարար չափով ներկայացված չեն կամընտրական /ուսանողի ընտրությամբ/ դասընթացները, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով դրանք շոշափելի են:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** *ՄՈւՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.**

Հիմնվելով ՀՀ կառավարության կողմից սահմանանված ՈԱՇ-ի, պետական կրթական չափորոշի վրա, յուրաքանչյուր մասնագիտացման համար ԵՊԿ-ի կողմից ձևավորվել են ուսումնառության համապատասխան ելքային արդյունքներ, որոնք ցույց են տալիս ուսումնառողի գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Հաստատությունը ձգտում է տարբեր մեթոդներով ապահովել ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների անաչառ գնահատման գործընթաց: ԵՊԿ-ում գործում է Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգը: Ակադեմիական ազնվության, գնահատման օբյեկտիվության և անաչառության բարձրացման նպատակով գործում են քննական հանձնաժողովներ, որում ընդգրկվում են տարբեր ամբիոնների ներկայացուցիչներ, ուսանողը գնահատվում է հանձնաժողովի կողմից:

Նման մոտեցմամբ բուհը փորձում է ապահովել գնահատման օբյեկտիվությունը և թափանցիկությունը: Լիարժեք չի ուսանողների բողոքարկման ընթացակարգը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ դ.** *ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.**

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան միակ երաժշտական բուհն է ՀՀ-ում, այդ իսկ պատճառով բուհը ՄԿԾ-ների բովանդակային բենչմարքինգ է իրականացրել արտերկրի նմանատիպ առաջատար բուհերի հետ՝ Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Կիև, Մինսկ,

3-12  
1/2  
1/2

Ռիգա, Վիլնյուս, Տալին, Թբիլիսի, Ամստերդամ: Վերը նշված գրեթե բոլոր կոնսերվատորիաների առարկայական ծրագրերն իրենց բովանդակային նկարագրով համարժեք են, հիմնվում են ընդհանուր մեթոդաբանական հիմքի վրա՝ մշակված նախկին ԽՍՀՄ երաժշտական բուհերի համար: Փորձագիտական խմբի տպավորությամբ հաստատությունը, կարծես, դեռևս պահպանողական է իր ուսուցման և ուսումնառության մոտեցումներում, ուսումնական պլանում ամբողջությամբ արտացոլված չեն կրթության ժամանակակից ասպեկտները, ուստի շարժունությունն ու միջազգայնացումը չեն ապահովվում:

Սակայն այժմ ԵԿԱ-ի լիիրավ անդամ դառնալու շնորհիվ ընդլայնվել են ԵՊԿ-ի՝ եվրոպական լավագույն կոնսերվատորիաների հետ կապեր հաստատելու հնարավորությունները, ինչը, մեր կարծիքով, կնպաստի կրթական ծրագրի արդիականացմանը: Ուսումնասիրվում են նաև Եվրոպական Կոնսերվատորիաների Ասոցիացիայի /ԵԿԱ/ կողմից հրատարակված «Poliphony»-ի ձեռնարկները:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:**

**ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒՄ:** Ըստ բուհի ինքնավերլուծության և փորձագիտական խմբի տարբեր հանդիպումների, ՄԿԾ-ի մշտադիտարկման կարևորագույն օղակներից են ամբիոնները, որոնք ապահովում են առարկայական ծրագրերի զարգացումն ու արդյունավետությունը: Արդյունավետության գնահատման տեսակներից են ուսանողների և դասախոսների շրջանում իրականացված հարցումները ՈՆԱԲ-ի կողմից տրվող հարցաթերթիկներով: ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործընթացը լրացնում են ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի տարբեր համերգների, գիտաժողովների և այլնի մասնակցության աստիճանի վերաբերյալ տվյալները: Սակայն պարզ չէ թե ինչպես են կիրառվում մշտադիտարկման արդյունքները և ինչ ազդեցություն է ունենում այդ գործընթացը կրթական ծրագրերի հետագա բարելավման վրա:

#### **ԴՍՏՈՂՈՒԹՅՈՒՆ**

Բարձրագույն երաժշտական կրթության ոլորտում, հաստատության կրթական ծրագրերը բովանդակային և ստեղծագործական առումով հուսալի են և համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին:

ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքները գլխավորապես համահունչ են հաստատության առաքելության հետ և համադրելի՝ Որակավորումների ազգային շրջանակի, ինչպես նաև՝ չափորոշիչի հետ:

Բուհում դեռ շարունակում են հետևել տասնամյակներ առաջ ռուսաստանյան կոնսերվատորիաների ծրագրերին ու ուսումնական պլաններին: Մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային որոշ անհամապատասխանությունները նմանատիպ այլ հաստատությունների կրթական ծրագրերին խոչընդոտում են ուսանողների և դասախոսների ազատ շարժունությանը, միջազգայնացմանը:

Կրթական բարեփոխումների շրջանակներում փորձում են կտրել այդ կարծրատիպը: Մշակված են շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքները, որոնք ամրագրված են հաստատության բակալավրի և մագիստրոսի դիպլոմի հավելվածներում (Diploma supplement): Այժմ համապատասխան ձևաչափերով մշակվում են ելքային արդյունքների վրա հիմնված ՄԿԾ-ի նկարագիրը և դասընթացների ծրագրերը

2007 թ. թեև անցում է կատարվել ուսուցման կրեդիտային համակարգի, սակայն այն դեռևս ոչ լիարժեք է: Մինչդեռ Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի լիարժեք կիրառումը կծառայի որպես կրթական ծրագրերի թարմացման օգտակար գործիք, ինչպես նաև կերաշխավորի մրցունակություն եվրոպական երաժշտական հաստատությունների հետ, ուսանողների շարժունությունն ապահովելու հնարավորություն կընձեռի:

Handwritten signatures and initials, including a large stylized signature at the bottom.

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը հարկ է համարում նշել, որ բուհի ուսանողները կարողանում են աշխատել այլ երկրներում և ուսումը շարունակել եվրոպական համանման բուհերում: ԵՊԿ-ի շրջանավարտները մեծ հաջողությամբ ելույթներ են ունենում համաշխարհային լավագույն բեմերում, մասնակցում հեղինակավոր մրցույթների, որն էլ ապացուցում է ԵՊԿ-ի կրթական ծրագրերի արդյունավետությունը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ բուհի ուսուցման համակարգում առկա են ուսանողակենտրոն ուսուցման առանձին տարրեր:

Ելնելով բուհի առանձնահատկություններից ուսանողների անհատական ուսուցման քաղաքականությունը երաշխավորում է մասնագիտական առարկաների դասավանդման և ուսումնառության մեթոդների միջև համապատասխանությունը: Կան շոշափելի փաստեր, որ դասավանդման մեթոդներն արդյունավետ են:

Ուսումնական պլանի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում կամընտրականությունը բավարար չէ:

Բուհը վերանայել և հաստատել է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգը, որը սակայն պարզեցման կարիք ունի:

Հաստատությունը ձգտում է տարբեր մեթոդներով ապահովել ուսանողների անաչառ գնահատման գործընթաց: Քննական հանձնաժողովները մեծ են և ապահովում են գնահատման անաչառությունը: Ուսանողները ևս հնարավորություն ունեն ներկա լինելու քննական գործընթացին, որն ապահովում է քննությունների թափանցիկությունը: Հանդիպումներից պարզվեց, որ թե՛ դասախոսները և թե՛ ուսանողները հիմնականում գոհ են գնահատման այս ձևից:

Բենչմարկինգ իրականացվել է հիմնականում նախկին ԽՍՀՄ երաժշտական բուհերի հետ: Դա բացատրվում է նրանով, որ դրանք բոլորն էլ հետ խորհրդային երկրներ են, և գտնվում են ելակետային նույն իրավիճակում: Նրանց փորձը կարող է ուսանելի լինել ԵՊԿ-ի համար: 2012 թ. այլ բուհերի հետ կնքած ԵՊԿ պայմանագրերի բովանդակությունը թույլ է տալիս նշել, որ դրանք մեծ հնարավորություններ կտան ապահովելու ուսանողների և դասախոսների փոխանակումը և նրանց շարժունությունը:

Թեև կրթական ծրագրերը մշտադիտարկվում և պարբերաբար վերանայվում են, սակայն պարզ չէ, թե ինչպես են կիրառվում մշտադիտարկման արդյունքները:

### ***Եզրահանգում.***

Հաշվի առնելով, որ ՄԿԾ-ները համահունչ են հաստատության առաքելությանը, բովանդակային և ստեղծագործական առումով հուսալի են և համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, իսկ վերջնարդյունքներով կրթական և դասընթացների ծրագրերի մշակման և համանման այլ հաստատությունների կրթական ծրագրերին ու միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցման համար բուհը որոշակի քայլեր է նախաձեռնել, փորձագիտական խումբը գտնում է, որ Չափանիշ 3-ը կարելի է գնահատել բավարար:

### ***ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.***

***Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են Չափանիշ 3-ի պահանջներին:***

### ***Խորհրդատվություններ.***

- 1. Հաստատությունը պետք է լիարժեքորեն կիրառի Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը:***
- 2. Հաստատությունը պետք է ուսումնասիրի դասավանդման և ուսումնառության տարբեր ժամանակակից մեթոդներ՝ ուսումնական պլաններն արդիականացնելու և միջազգային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:***

Spencer  
in reply  
to



3. Ուսանողների գիտելիքների գնահատման համար պետք է հիմք ծառայեցնել ուսումնառության վերջնարդյունքները:
4. Անհրաժեշտ է մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունքների գնահատման և վերանայման կարգը և համապատասխան մեխանիզմները:
5. Պետք է ՄԿԾ-ի մշակման, բարելավման գործում մեծացնել ամբիոնների դերը:

#### IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** *ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:*

##### *Արդյունքներ.*

Մասնագիտական կողմնորոշման նպատակով ԵՊԿ-ում կազմակերպվում են ծառայությունների մատուցում տարիքային տարբեր խմբերի համար:

ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, ովքեր աշխատում են նաև տարատեսակ երաժշտական այլ կազմակերպություններում՝ երաժշտական և արվեստի կրթական հաստատություններ, հանրակրթական դպրոցներ և այլն, նպաստում են երեխաների, պատանիների և երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը: Կազմակերպվում են համերգներ, ցերեկույթներ, վարպետության դասեր, համերգ-դասախոսություններ և այլն, որոնցում մասնակցում են ոչ միայն ԵՊԿ-ի դասախոսները այլ նաև ուսանողները:

Կոնսերվատորիայի նախաձեռնած «Երաժշտական զրուցակից»-ը կազմակերպում է երաժշտական լուսաբանման աշխատանքներ՝ համերգներ, դասախոսություններ ԵՊԿ-ի անձնակազմի և ուսանողության մասնակցությամբ, Երևանի և ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցների, բուհերի համար:

Երաժշտի մասնագիտության նկատմամբ հետաքրքրությունը խթանող գործոն են նաև մանկապատանեկան երաժշտական մրցույթները:

ԵՊԿ-ի նախաձեռնությամբ երաժշտական տարբեր հաստատություններում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցում են ունկնդրումների, դասարանական և հաշվետու համերգների, ինչպես նաև զլխավորում են ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովները կամ հանդես գալիս իբրև հանձնաժողովի անդամ, որտեղ և առիթ են ունենում ծանոթանալու ապագա դիմորդների և նրանց հնարավորությունների հետ: Բուհը չի ուսումնասիրել և գնահատել թե իրականացվող այս գործընթացներն ինչքանով են նպաստել դիմորդների հավաքագրմանը:

ԵՊԿ-ի ընդունելության քննություններն անցկացվում են համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգի:

Մասնագիտական առարկաների քննությունները ներբուհական են: Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար Կոնսերվատորիան նախապես ներկայացնում է ՀՀ ԿԳ նախարարություն համապատասխան առաջարկներ՝ մասնագիտացումների ցանկի փոփոխությունների, քննությունների, ընդունելության տեղերի և վարձավճարների չափերի, ինչպես նաև դիմորդների փաստաթղթերի ընդունման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ: Ընդունելությունը կատարվում է կրթական չափորոշիչներով սահմանված դիմորդին ներկայացվող պահանջներին համապատասխան: Յուրաքանչյուր տարվա ընդունելության գործընթացի ավարտից հետո Գիտական խորհրդի, ռեկտորատի, Գյումրու մասնաճյուղի տնօրինության նաև Կառավարման խորհրդի նիստերում մանրամասն քննարկվում և վերլուծվում են տվյալ տարվա ընդունելության կազմակերպման, անցկացման և



Handwritten signature  
M. K. ...  
Handwritten signature

իրականացման աշխատանքները: Վերլուծության արդյունքներն ընդգրկվում են տարեկան ընդհանուր հաշվետվության մեջ և ուղղված են գործընթացի բարելավմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման բաղաբաղանդություն և ընթացակարգեր:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Ուսանողների կրթական կարիքների վերհանման արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԵՊԿ-ում կրթությունը հիմնականում իրականացվում է անհատական պարապմունքների միջոցով՝ մասնագիտական, նվազակցության, կամերային անսամբլի, կվարտետի դասարաններում, որտեղ ուսանողները միշտ հնարավորություն ունեն դասախոսի հետ անձնային շփման միջոցով բարձրաձայնել իրենց հետաքրքրող խնդիրները և ստանալ պատասխաններ: Յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը, խնդիրներն ու բացթողումները պարբերաբար քննարկվում են մասնագիտական ամբիոններում, արվում եզրակացություններ և առաջարկներ:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման հիմնական բաղադրիչներից է ուսանողների շրջանում դասավանդման որակի և ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ սոցիոլոգիական հարցումները:

Ուսանողների կրթական կարիքների վերհանմանը նպատաուղղված են նաև Կոնսերվատորիայում մատուցվող խորհրդատվական ծառայությունները: Մասնագիտական խորհրդատվական ծառայությունը կազմում է դասախոսի մեթոդաբանության հիմնական մասը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ԵՊԿ-ն ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Սեփական կրթական կարիքներից ելնելով, ուսանողը կարող է օգտվել ԵՊԿ-ի առաջարկած այլ կրթական ծառայություններից՝ նախապատրաստական և վճարովի դասընթացներ, նաև լրացուցիչ կրթություն: Վերջինս չունենալով տարիքային սահմանափակում, բուհի կողմից դիտվում է նաև շարունակական կրթության հնարավորություն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԲՈՒԻ-ը չունի աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, սակայն Կոնսերվատորիայի յուրաքանչյուր ուսանող ցանկացած պահի կարող է անհրաժեշտ հարցով դիմել համապատասխան վարչական աշխատակցին: ԲՈՒՀ-ում առկա է նաև ուսանողների կարծիքների և առաջարկությունների արկղ:

Կոնսերվատորիայի գրասենյակը «Գրասենյակի կանոնակարգ»-ով սահմանված գործավարությանը համապատասխան ընդունում, գրանցում (հաշվառում) և Կոնսերվատորիայի ռեկտորի կողմից վերահասցեագրված դիմումները փոխանցում է ըստ կատարողների:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:**

and  
M. G. G. G.  
G. G.

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ:** Կոնսերվատորիայի լավագույն ուսանողները մասնակցում են դասարանական, հանրապետական, միջազգային տարբեր համերգների, մրցույթների, փառատոների: Մասնակցությունը տալիս է որոշակի ճանաչում, լինում են գործնական հրավերներ տարբեր կազմակերպություններից, նաև հրավերներ՝ շարունակելու ուսումը արտասահմանյան երկրներում:

Բուհը չունի Կարիերայի կենտրոն: Ուսանողների կարիերայի հետ կապված խորհրդատվական ծառայությունների պարտականությունները դրված են Երիտասարդության և մենեջմենտի հարցերով ռեկտորի օգնականի վրա:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ:**

ԵՊԿ-ում ուսումնառողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավմանը նպաստում է «Ուսանողական գիտաստեղծագործական» ընկերությունը, որը յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպում է երաժշտագետ ուսանողների գիտաժողովներ, որոնց ընթացքում տասնյակ ուսանողներ հանդես են գալիս զեկույցներով:

Գիտաժողովներին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի ուսանողներ:

Լավագույն ուսումնասիրությունների հեղինակները ներգրավվում են տվյալ գիտական ոլորտի ուսումնասիրության աշխատանքներում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ:** Կոնսերվատորիայի ուսանողական խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները բուհի ուսումնառողների շրջանում, արտահայտում և պաշտպանում է նրանց շահերը:

Ուսումնառողների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով նախատեսվում է բուհում ստեղծել նաև ուսումնառողների իրավունքների պաշտպանության և օրինականության պահպանման հանձնաժողով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ:**

Ուսանողների կրթական և այլ խնդիրների վերհանման, ինչպես նաև ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման նպատակով ՈՆԱԲ-ը մշակել և կիրառում է տարաբնույթ հարցաթերթիկներ, որոնցում ուսանողը կարող է գնահատել վարչական մասի, ֆակուլտետների և ամբիոնների, ուսումնաօժանդակ մասի և այլ ենթակառուցվածքների աշխատանքները:

**ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ:**

Հաստատությունը գովազդի կարիք չունի, քանի որ երկրում այն միակն է իր տեսակի մեջ: Այն գրավում է ուսանողներ հարևան երկրներից (ինչպես նաև այլ երկրներից) իր ճանաչված դասախոսների և ավանդույթների շնորհիվ:

Բուհի կողմից արվում են որոշակի քայլեր՝ ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման ուղղությամբ:

3p  
m  
m

Գրեթե բոլոր միջոցներն էլ գործադրվում են՝ ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության ուղղությամբ /բուհ-քոլեջ, բուհ-ավագ դպրոց, արտասահմանցի ուսանողներ, նախապատրաստական դասընթացներ, սփյուռքահայեր և այլն/: Չի երևում, պարզապես, այդ քայլերի գնահատմանը և բարելավմանն ուղղված որևէ ծրագիր կամ միջոցառումների պլան: Սակայն, հաշվի առնելով ժամանակակից աշխատաշուկայում մշակույթի զարգացման համար ստեղծված անբարենպաստ պայմանները ԵՊԿ-ի դիմորդների հոսքը կայուն է, կարելի է ասել, որ մասնագիտական կողմորոշման նպատակով իրականացրած աշխատանքներն արդյունավետ են:

**Հաստատությունը հստակորեն առաջնորդվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ընդունելության ընթացակարգերով:**

Բուհում առկա են գործուն մեխանիզմներ՝ ուսանողների կարիքների վերհանման ուղղությամբ, չնայած, որ դրա համար առանձին մշակված քաղաքականություն և ընթացակարգեր չկան: Առանձին դեպքերում հարցումները, բուհի թերթի հրատարակումները արդյունավետ միջոցներ են ուսանողների կարիքների վերհանման համար: Ուսանողները հիմնականում գոհ են իրենց բարձրացրած հարցերի ներկայացման մեխանիզմներից, հարցերի լուծումներից:

Բուհում հրաժարվել են ուսումնական խորհրդատուի ծառայություններից, համարելով, որ հիմնականում անհատական պարապմունքների միջոցով այդ հարցը լուծվում է:

Կան բազմաթիվ հարցումներ ուսանողների կարիքների վերաբերյալ: Ուսանողության խորհուրդը պատասխանատու է ուսանողների շրջանում մշտադիտարկում իրականացնելու և գաղափարներ հավաքելու համար, ինչպես նաև այդ տեղեկատվությունը ամբիոնների վարիչների, դեկանների և Գիտխորհրդի հետ հանդիպումներում ներկայացնելու համար:

Հաստատությունն որպես լրացուցիչ կրթություն ապահովում է նախապատրաստական և վճարովի դասընթացներ՝ կատարելագործման, որակավորման բարձրացման ևն: Երաշխավորված է լրացուցիչ աջակցություն և ուղղորդում վարչական կազմի կողմից: Թեև չկան վարչական կազմին դիմելու հստակ սահմանված ժամեր, սակայն հաշվի առնելով անհատական ուսուցման մեթոդի առկայությունը, ինչպես նաև երաժշտական կրթության առանձնահատկությունները, սա խնդիր չէ:

Բուհում չկան կարիերային նպաստող ծառայություններ, սակայն, հաշվի առնելով երաժշտական մասնագիտության բնույթը և մասնագիտական ոլորտի հետ անխառնափեղի սերտ կապերը (որոշ դասախոսներ նաև ակտիվ են մասնագիտական գործունեության առումով), ուսանողներին տրամադրվում է ուղղորդում:

Բուհում հիմնական հետազոտական ուղղությունները երաժշտագիտությունն ու հայկական ժողովրդական երաշտությունն են: Ուսանողներն ակտիվ ներգրավված են այս հետազոտություններում (ինչպես նաև այլ հետազոտություններում), հատկապես մագիստրոսի աստիճանում: Մյուս մասնագիտացումների ուսանողներին խրախուսվում է գրել զեկույց /գրավոր նյութ իրենց կատարած ստեղծագործությունների, ինչպես նաև ավարտական աշխատանքների վերաբերյալ:

Բուհի գիտաժողովների նյութերը հրատարակվում են գիտական ժողովածուներում:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման գործիք է համարվում հարցումները, որի արդյունքները ներկայացվում են ռեկտորին, քննարկվում համապատասխան ենթակառուցվածքի հետ: Այնուամենայնիվ բաց է մնում տարբեր ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը: Այս հարցում ևս որակի մշակույթը բուհում գտնվում է ձևավորման փուլում:

Նախատեսվում է մոտ ապագայում հարցումների արդյունքները ներկայացնել բուհի վերակազմավորվող կայք-էջում:

*Ուսանողների իրավունքների պաշտպանության պարտականությունը դրված է Ուսանողական խորհրդի վրա, և վերջինս լավ տեղեկացված է, հետևաբար ուսումնառողների իրավունքների պաշտպանության առանձին հանձնաժողովի կարիք, կարծում ենք, չկա:*

3  
M. Kelly  
C



Ուսանողները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում ուսանողական հարցումների, ինչպես նաև ամբիոններում և ղեկավար անձնակազմի շրջանում առկա «բաց դռների» մոտեցման միջոցով:

Ուսանողները ներկայացված են կառավարման բոլոր մակարդակներում: Ուսանողները նաև մասնակցում են ֆակուլտետային խորհրդներում: Ուսանողական խորհուրդը կենտրոնակ և ակտիվ է:

Ուսանողներն ունեն դրական վերաբերմունք իրենց տրամադրվող կրթական ծառայությունների և կրթության ընդհանուր որակի հարցում: Նրանք լիովին ազատ են իրենց մասնագիտական առարկաների դասախոսների ընտրության հարցում: Ուսանողները թեն հստակ չեն գիտակցում բարձրագույն երաժշտական կրթության ոլորտում առկա հնարավորությունները, մինևույն ժամանակ, նրանք ակտիվ են ղեկավար օղակներում և ուզում են որոշակի փոփոխություններ անել այդ ասպարեզում: Ուսանողական խորհուրդը լուրջ է վերաբերվում իր դերին և ակտիվ դերակատարում ունի ուսումնառության միջավայրի բարելավման գործում:

#### **Եզրահանգում.**

ԵՊԿ-ն ընդհանուր առմամբ ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են Չափանիշ 4-ի պահանջները:**

#### **Խորհրդատվություններ.**

1. Անհրաժեշտ է մշակել դիմորդների հավաքագրման, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:
2. Անհրաժեշտ է բուհում ունենալ ուսումնական խորհրդատուների ինստիտուտը:
3. Անհրաժեշտ է ունենալ բուհի աշխատակազմին դիմելու կանոնակարգ և ժամանակացույց:
4. Ցանկալի է բուհում ունենալ կարիերայի կենտրոն կամ դրան փոխարինող օղակ:

## **V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ**

**ՉԱՓԱԻՇ:** ՄՈՒՂ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:



**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՂ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:**

#### **ԱՐԶՈՒՆՔՆԵՐ.**

Որակյալ կադրային ներուժի խնդրին մեծ տեղ է հատկացված ԵՊԿ-ի Ռազմավարական ծրագրում:

ԵՊԿ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգ: Այդ փաստաթղթով սահմանվում են ԵՊԿ-ի գիտամանկավարժական պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման չափանիշները և ձևավորման կարգը, բացառիկ դեպքերում՝ պաշտոններում նշանակման և պայմանագրի վերակնքման սկզբունքները:

Գիտամանկավարժական կադրերի որակավորումները լիովին համապատասխանում են անհրաժեշտ պահանջներին: Դասախոսական կազմի ձևավորման սկզբունքներն են պրոֆեսիոնալիզմը, սերունդների ժառանգականությունը և փորձը: Այս սկզբունքներին հետևելը

  
The King's  


թույլ է տալիս պահպանել և զարգացնել դասավանդման մակարդակը, նպաստում է գիտաստեղծագործական դպրոցների ստեղծմանը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցութային ընտրությունը իրականացվում է նախապես հրապարակված չափանիշներով: Այդ չափանիշներից են մասնագիտական կրթությունը, որակավորումը, մասնագիտացումը և դրանց համապատասխանությունը դասավանդվող առարկաների ոլորտին, աշխատանքային փորձը, մանկավարժական ձիրքի առկայությունը, գիտական աստիճանը և կոչումը:

Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման պայմանները, պաշտոններում նշանակման (պաշտոնատեղերի ստեղծման, տեղակալման, առաջընթացի) սկզբունքները ներկայացված են ԵՊԿ-ի Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում և Կոնսերվատորիայում աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու կարգապահական տույժի ենթարկման ընթացակարգում:

ԵՊԿ-ի դասախոսների 98%-ը Կոնսերվատորիայի շրջանավարտներ են: Բուհը սկսել է օպտիմալացնել վարչական կազմը և ամրապնդել պրոֆեսորադասախոսական կազմը: 2011-2012թթ. ընդհանուր աշխատողների 58%-ը եղել է պրոֆեսորադասախոսական կազմը, իսկ 2013թ.-ին՝ 72%-ը:

2012թ.-ին ԵՊԿ-ի Գիտական խորհրդի որոշմամբ ԵՊԿ-ի ուսումնառության կազմից հանվեցին իյուստրատորի և նվագակցողի պաշտոնների հաստիքները և ստեղծվեցին ուսումնական ասիստենտի թափուր հաստիքներ պրոֆեսորադասախոսական կազմում:

Այս փոփոխությունը պայմանավորված էր մասնագետների աշխատանքի որակի բարձրացման, մրցութային կարգով նրանց աշխատանքի ընդունելու, ամբիոնների աշխատանքներին նշված մասնագետների լիարժեք մասնակցության, առաջխաղացման հնարավորության, աշխատանքային պայմանների և աշխատավարձի բարձրացման անհրաժեշտությամբ: Արդյունքում ուսումնառության կազմը կրճատվել է 5 անգամ:

ԵՊԿ-ի ռազմավարական կարևոր խնդիրներից է անձնակազմի, այդ թվում՝ պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացումը: Այսօր Կոնսերվատորիայի աշխատակիցների 22%-ը կենսաթոշակային տարիքի են: 2012թ.-ից սկսած կենսաթոշակային տարիքի դասախոսների հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են 2 տարով:

**ԶՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:**

**ԱՄԹՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ում գործում է արվեստի բակալավրի, արվեստի մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերը: Մասնագիտական առաջընթացի ապահովման նպատակով պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի որակի գնահատումն իրականացվում է շնորհիվ մրցութային համակարգի, որի արդյունքների հիման վրա կնքվում են աշխատանքային պայմանագրեր, ոչ առավել քան 5 տարի՝ հիմք ընդունելով նախորդող ժամանակահատվածում ուսումնական, գիտական, մանկավարժական և հասարակական գործունեության ցուցանիշները:

ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական պաշտոնների հավակնորդների գործերը քննարկվում են համապատասխան ամբիոններում, որտեղ նաև մշակվում են մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջները:

Մագիստրոսական ծրագրի բոլոր դասախոսներն ունեն գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի կոչում: Ասպիրանտական ծրագրի բոլոր դասախոսներն ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի աստիճան: Ասպիրանտների գիտական ղեկավարների մեծ մասը ԵՊԿ-ի հիմնական աշխատակիցներ են, ունեն ուսումնասիրվող թեմաների ոլորտներին առնչվող առենախոսություններ, գիտական աշխատություններ և համապատասխան թույլատվություն ԲՈՂ-ի կողմից:

~~Q. 1~~

Mr. K. P. S.

*[Handwritten signature]*



**ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.**

Ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները վկայում են պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետության մասին:

Յուրաքանչյուր ամբիոնի վարիչ հնարավորություն ունի ծանոթանալու ամբիոնի կազմում ընդգրկված դասախոսների գնահատմանը ուսանողների կողմից:

Ուսանողին ուղղված սոցիոլոգիական հարցաթերթիկներում հարցերը խմբավորված են համապատասխան թեմաներով, որի նպատակն է բացահայտել դասախոսի գործունեության արդյունավետությունը

ԵՊԿ-ի դաշնամուրային Ֆակուլտետի խորհրդի կողմից մշակվել և հաստատվել է նոր քաղաքականություն, ըստ որի՝ ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների դասախոսների համար անհրաժեշտ պայման է՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում անցկացնել մեկ բաց դաս, որն էականորեն տարբերվում է ավանդական դասալսումից. այստեղ մասնակցելու հնարավորություն ունի յուրաքանչյուր ցանկացող՝ դասախոս, ուսանող, արտաքին շահակից:

ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության որակի գնահատման չափանիշներից է նաև նրանց կողմից ուսանողական համերգների կազմակերպումը, նրանց կատարողական և գիտահետազոտական գործունեությունը: Դասախոսական կազմի պարբերաբար գնահատումը գլխավորապես կատարվում է ուսանողների շրջանում կատարվող հարցումների միջոցով: Գնահատման գործընթացը կանոնակարգված չէ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում՝ բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.**

Գիտական խորհուրդը և ռեկտորատը մեծ ուշադրություն են դարձնում մանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման, դասավանդման գործընթացների կատարելագործմանը:

Համապատասխան ֆինանսավորման բացակայության պատճառով ԵՊԿ-ն դեռևս հետաձգում է Որակավորման բարձրացման ֆակուլտետի բացումը: ԲՈՒՀ-ը չունի մասնագիտական զարգացման քաղաքականություն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.**

Դասավանդողների 96%-ը ԵՊԿ-ի հիմնական հաստիքային աշխատակիցներ են, ինչն ապահովում է բուռն կայուն ուսումնագիտական գործունեությունը: Դասախոսական կազմի մեծ մասն այս հաստատության շրջանավարտներն են, ինչը որոշ չափով ապահովում է դասախոսական կազմի կայունությունը: Լավագույն շրջանավարտները դառնում են ամբիոնների ասիստենտներ՝ գիտական և մեթոդական աճի հեռանկարով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:**

39

Wm. S. W.

Wm. S. W.

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.**

Ինքնավերլուծությունում բերված թվային տվյալները վկայում են Բուհում կադրային ներուժի ձևավորման դրական տեղաշարժի մասին: Դասախոսների որակավորումների բարձրացմանը նպաստում են. ասպիրանտուրայի առկայությունը (ներկայումս այդ համակարգում սովորում է 3 հոգի). ԵՊԿ-ի երիտասարդ աշխատակիցներից վեցն այժմ հայցորդական համակարգում պատրաստում են ատենախոսություններ: Հայցորդական համակարգում իրականացվող թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների համար տրամադրում են ստեղծագործական արձակուրդներ, Համերգներին, փառատոներին, գիտաժողովներին պատրաստվելու համար մասնակիցներին նույնպես տրվում է ստեղծագործական արձակուրդ:

Վերջին 5 տարիների ընթացքում բուհի 19 դասախոս պաշտպանել են թեկնածուական,

1. դոկտորական ատենախոսություն: Ներկայումս

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնասօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:**

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.**

ԵՊԿ-ի վարչական մասի կադրային քաղաքականությունը նպատակաուղղված է ձևավորել, կարգավորել, բարձրացնել պրոֆեսորադասախոսական կազմի պրոֆեսիոնալիզմը, ապահովում է բարձրակարգ մանկավարժների կայուն առաջընթացը: Վարչական կազմի կազմակերպչական և ուսումնասանկավարժական գործունեությունը ոչ միայն նպաստում է հաջողությամբ լուծել բուհի ընթացիկ խնդիրները, այլև դնել նրա ինքնազարգացման և առաջընթացի հիմքերը:

### **ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ.**

Պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը լիովին համապատասխանում է ներկայացվող մասնագիտական որակին և պահանջներին: Դասախոսական կազմը լավ «զինված է» և ունի բարձրորակ որակավորումներ՝ ավանդական երաժշտական կոնսերվատորիայի կրթություն ապահովելու համար: Դասախոս-ուսանող հարաբերակցությունը չափազանց բարձր է և արդարացված չէ: Ուսումնասիրելով արտասահմանյան նմանատիպ բուհերի կառուցվածքը կոնսերվատորիան 2012 թ. սկսել է օպտիմալացնել իր աշխատակազմը, արդյունքները դեռ վաղ է գնահատել:

Դասախոսական կազմի մեծ մասն այս հաստատության շրջանավարտներն են: Այս հանգամանքը կարելի է դիտարկել որպես պրոֆեսորադասախոսական կազմի կայունության երաշխիք, բայց միևնույն ժամանակ կարող է խոչընդոտել արտաքին միջավայրի հետ կապը՝ ստեղծելով փակ շրջան (էկո - համակարգ):

Իր դասախոսական կազմի կայուն որակն ապահովելու համար բուհում գործում է դասախոսների մրցույթով ընտրության կարգը, ընտրության հիմքում դրված է դասախոսի որակավորման գնահատման քաղաքականությունը: Դասախոսները գնահատվում են յուրաքանչյուր 5 տարին մեկ, ափրականացվում են դասախոսների գնահատման հարցումներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհիվ ուղիղ որակավորումներին ներկայացված է նրանց կոչումներով, մրցանակներով, շքանշաններով, որոնք բավականին մեծ տոկոս /1/3-ից ավելին/ են կազմում և ծանրակշիռ փաստարկներ են: Դասախոսական կազմի 47 տոկոսն ունի դոկտորի և դոցենտի գիտական աստիճան, ընդ որում մագիստրատուրայում և ասպիրանտուրայում դասավանդում են բացառապես կոչում ունեցող դասախոսներ, որը դրական մոտեցում է, ընդ որում այդ դրույթն ամրագրված է ԵՊԿ-ի Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգում: Դասախոսական կազմի պարբերաբար գնահատումը գլխավորապես կատարվում է ուսանողների շրջանում կատարվող հարցումների միջոցով:



Paul

the Kellys.

A stylized handwritten signature, possibly reading "Paul", written in dark ink.

Բուհի առանձնահատկությունից ելնելով, ուսանողներն են ընտրում իրենց վարպետության դասախոսին, ինչը նույնպես դասախոսների գնահատման միջոցներից է: Գնահատման միջոց են նաև ուսանողական համերգների կազմակերպումը: Վերջինս, սակայն կանոնակարգված չէ: Այն ամրագրված չէ նաև դասախոսի աշխատանքային պարտականությունների մեջ, որն է մեկ ընթացակարգում և այլն:

Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ չեն անցկացվում, չկա մասնագիտական զարգացման քաղաքականություն: Ինչը՝ ըստ բուհի, սուղ ֆինանսական միջոցների պատճառով որակավորման բարձրացման ֆակուլտետի բացակայության արդյունք է: Կարծում ենք ֆինանսավորման բացակայությունը չի կարող պատճառ լինել որակավորման բարձրացման որևէ օղակ /պարտադիր չէ ֆակուլտետ/ ստեղծելու համար, եթե կարևորվել է դրա խիստ անհրաժեշտությունը: Իրենք՝ դասախոսները ևս զգում են կատարելագործման կարիք /ոչ այնքան մասնագիտական, քանի որ մասնագիտական կատարելագործում պարբերաբար իրականացվում է արտասահմանյան կատարողների կողմից այստեղ իրականացրած վարպետության-դասերի ժամանակ, այլ հատկապես մանկավարժական կարողությունների զարգացման ուղղությամբ /:

*Ակնհայտ է, որ բուհի հիմնական դասախոսական կազմն ունի անհրաժեշտ որակավորումներ՝ բարձր մակարդակի կրթություն ապահովելու համար:*

Առկա չեն դասախոսների խրախուսման հստակ ընթացակարգեր: Դեռևս բարձր է դասախոսական կազմի կենսաթոշակային տարիքի դասախոսների մասնաբաժինը, ինչը դժվարացնում է երիտասարդ կադրերի առաջընթացը:

*Եզրահանգում. ԵՊԿ-ն իր առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար ունի անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ և բուհի վարած կազմակերպչական գործունեությունը և կադրային քաղաքականությունը ապահովում է կայուն կադրային ներուժ: Փորձագիտական խումբը գտնում է, որ Չափանիշ 5-ը կարելի է գնահատել բավարար, սակայն այս չափանիշի շրջանակում բուհը դեռևս անելիքներ ունի:*

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.** Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են Չափանիշ 5-ի պահանջները:

#### *Խորհրդատվություններ.*

1. Անհրաժեշտ է ունենալ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման և խրախուսման ընթացակարգեր:
2. Անհրաժեշտ է մշակել մասնագիտական զարգացման քաղաքականություն, կազմակերպել պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ՝ հատկապես մանկավարժական կարողությունների զարգացման ուղղությամբ:
3. Արդյունավետ դարձնել ուսանողական հարցման արդյունքների հետադարձ կապը:
4. Առանձնակի ուշադրության առարկա դարձնել բուհի սկսնակ դասախոսների գործունեության կազմակերպումը:

## **VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

**ՉՍՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Handwritten signature  
M. Hill  
Handwritten signature

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.**

ԵՊԿ-ում հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները սահմանված են բուհի 2012-2017թթ. Ռազմավարական ծրագրի հիման վրա:

ԵՊԿ-ի ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն ապահովվում է ԵՊԿ-ի Գիտական խորհրդի կողմից հաստատված գիտական ոլորտի զարգացման ռազմավարությամբ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ.** ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն ունի իր գիտական խորհրդի կողմից հաստատված գիտական ոլորտի զարգացման ռազմավարություն: Իսկ էլենլով բուհի առանձնահատկություններից, հատկապես կատարողական ոլորտի համար, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում հնարավոր չէ:

Հետազոտությունների իրականացման մեթոդաբանության ընտրությունը ԵՊԿ-ում թողնված է հետազոտողի հայեցողությանը: Այն դիտարկվում է որպես հետազոտողի գիտական խնդիրներից բխող, գիտնականի կողմից իր խնդրի լուծման համար նախընտրելի համարվող և արդյունավետ միջոցի ընտրություն:

ԵՊԿ-ում կատարված հետազոտությունների հրապարակումներին ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հրապարակված ցանկում ընդգրկված գրախոսվող գիտական պարբերականների պահանջներին համապատասխան:

ԵՊԿ-ի Գիտական խորհուրդը հաստատել է ԵՊԿ-ի գիտական պարբերականներում հրապարակման ենթակա հետազոտություններին ներկայացվող տեխնիկական և այլ չափանիշների հայեցակարգ:

ԵՊԿ-ի հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի արդյունավետության վերջին 3 տարվա վերլուծություն չի իրականացվել, քանի որ համապատասխան կանոնակարգային հիքերը բուհում ընդունվել են 2013 թվականին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ում հետազոտությունների իրականացման համար ստեղծված են հրատարակվելու հնարավորություններ: Գործում են «Երաժշտական Հայաստան» գիտական հանդեսն ու «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոսների գիտամեթոդական հոդվածների և ուսումնասիրողական աշխատանքների ժողովածուն»:

2013-ին նախատեսվում է ԵՊԿ-ի ինտերնետային կայքի գործարկումը, որը հնարավորություն կստեղծի նաև էլեկտրոնային գիտական մամուլ ունենալու:

ԵՊԿ-ում երիտասարդ աշխատակազմի համար սահմանված են հետազոտական և գիտական արդյունքների հրապարակման հավասար պայմաններ՝ բուհում աշխատող վաստակաշատ և առաջատար գիտնականների հետ միասին:

ԵՊԿ-ի հրատարակությունն ունի գիտական խմբագրական խորհուրդ, որը վերահսկում է գիտական հրապարակումների գործընթացը:

Բյուջետային ցուցանիշների համակարգի մշակման գործընթացը կատարվում է ըստ գործունեության քննազեկների և զարգացման ուղղությունների:

~~Handwritten signature~~  
Handwritten signature  
Handwritten signature

Միջազգային կազմակերպություններից ֆինանսավորումները ստացվում են կորկրետ դրամաշնորհային ծրագրերի համապատասխան, հրամանագրվում են և նպատակային ծախսվում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը ԵՊԿ-ում խրախուսվում է օտարերկրյա տարբեր ուսումնական հաստատությունների հետ կնքված համաձայնագրերում և պայմանագրերում գիտական հետազոտությունների վերաբերյալ սահմանված կետերով:

ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների ընթացակարգը կազմակերպվում է այդ պարբերականների կողմից սահմանված ընդհանուր հիմունքներով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված՝ ԵՊԿ-ի քաղականությունն իրականացվում է ԵՊԿ-ի Կանոնադրության, ԵՊԿ-ի 2012-2017թթ.-ի Ռազմավարության, ԵՊԿ-ի գիտական ոլորտի զարգացման ռազմավարության, մասնագիտական ամբիոնների առաջադրած խնդիրներին համապատասխան և նույն ամբիոնների օրինակելի կանոնակարգով:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, որպես ուսումնական գործընթացի հաշվետու միջոցառում ԵՊԿ-ում կազմակերպվում է հանրապետական ուսանողական գիտաժողով, որին ԵՊԿ-ի երաժշտագիտական բաժնի ուսանողների մասնակցությունը պարտադիր է:

Երաժշտական կատարողական արվեստի մասնագիտական ամբիոններում նույնպես կատարողական վարպետության հրապարակային ցուցադրությանը (համերգային ելույթ) զուգահեռ սահմանված է գիտական թեզի ներկայացում:

### **ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ.**

Բուհի հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները արտահայտված են ՌԾ-ում: Բուհում խնդիր է դրվել խթանել հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, վերակառուցել Կոնսերվատորիայի ասպիրանտուրան որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ որակավորումների միջազգային հենքի պահանջներին համապատասխան:

Բուհում իրականացրած հետազոտական աշխատանքների արդյունքները լայնորեն կիրառվում են դասավանդման մեջ: Հատկապես մագիստրատուրայում պարտադիր նախատեսվում է հետազոտական աշխատանքներ ուսումնառողների կողմից:

Բուհում առկա է զգալի գիտական հետազոտական գործունեություն, և հաստատությունն ունի իր սեփական հրատարակչությունը: Ներկայացվող հոդվածները գրախոսվում են: Ինքնավերլուծության զեկույցում նշվում է հետազոտության նոր ռազմավարության մասին, որը հաստատվել է 2012թ-ին: Առկա են փաստեր ստեղծագործական գործունեության և զարգացման վերաբերյալ, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ազգային և միջազգային գիտաժողովներին:

Բուհում գլխավորապես գործում են անհատական հետաքրքրություններին համապատասխան հետազոտություններ:

Ժողովրդական երաժշտության բաժինը աշխատում է՝ համապատասխան հաստատության ռազմավարական ծրագրի և առաքելության՝ խթանելու հայաստանյան երաժշտական ավանդույթները: Այլ կերպ ասած, առաջնորդվում են այդ ծրագրերով: Գիտական խորհուրդը վերահսկում է հաստատությունում իրականացվող հետազոտական գործունեությունը:

30  
W. Kelly  
[Signature]



Հետազոտության և զարգացման նպատակով բյուջեով տարեց-տարի ավելի մեծ հատկացումներ են նախատեսվում /2008թ-0,45%, 2012-ին՝ 13,65%/: Առաջընթացն ակնհայտ է, սակայն բավարար չէ: Բյուջետային համակարգը կատարելագործվում է՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխումը և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցումը՝ առաջադրված ռազմավարական նպատակներին հասնելու համար:

«Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» գիտական լաբորատորիայում հետազոտական աշխատանքներ են տարվում ՀՀ տարբեր մարզերում և բնակավայրերում, գիտական արշավների դժվարին աշխատանքների արդյունքում, (սկսած 1944թ.-ից՝ երաժշտական գիտահետազոտական կաբինետի ստեղծման օրից) հավաքվել է շուրջ 15.000 ազգային երաժշտական նմուշ, որի մեծ մասը դեռևս ենթակա է վերծանման: Ամբիոնի գիտաշխատողների կողմից վերջին 5 տարիների ընթացքում պատրաստվել և Մշակույթի նախարարության աջակցությամբ տպագրվել է 10 պրակ, որոնցում ներառված են Հայաստանի տարբեր շրջաններին (Անի, Ապարան, Վան և այլն) պատկանող վերծանված նմուշներ, տեսական աշխատություններ, ժողովրդական երգերի մշակումներ և այլն:

Դրանք լայնորեն օգտագործվում են դասավանդման պրոցեսում: Բանահավաքման համար լաբորատորիան կազմակերպում է գիտարշավներ, որին մասնակցել և մասնակցում են բուհի ուսանողները:

ՀՀ ԲՈՂ-ի կողմից գրանցված «Երաժշտական Հայաստան» գիտական հանդեսը մեծ հնարավորություններ է ընձեռում գիտական աշխատանքների ծավալման, հետազոտությունների արդյունքների հրատարակման համար:

Հաստատությունը խթանում է իր հետազոտական գործունեությունը և հայկական ժողովրդական երաժշտության ամբիոնում իրականացվող տպավորիչ հետազոտական գործունեությունը պետք է գնահատել: Ցանկալի է, որ հիմնական դասախոսական կազմը «հետազոտության և զարգացման» վերաբերյալ հաշվետվություն ներկայացնի տարին երկու անգամ: Կարծում ենք դասախոսական կազմի հետազոտական գործունեության համար հատկացված ֆինանսական աջակցությունը բավարար չէ:

Բուհի հետազոտական գործունեության միջազգայնացման արդյունավետությունը և վերջին 5 տարիների նվաճումը ներկայացվում է ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի 2007-2013 թթ. գիտական հրապարակումներով: Դեռևս շատ չէ բուհի միջազգային պարբերականներում հրատարակումների թիվը: Այս ուղղությամբ բուհը շատ անելիքներ ունի: Հաստատությունը տեղյակ է հետազոտության ոլորտում միջազգային ակտիվություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին, սակայն, համապատասխան ֆինանսավորման պակասը խոչընդոտում է այս ուղղությամբ իրականացվող քայլերը:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներն ամրագրված են բուհի մի շարք կանոնակարգող փաստաթղթերում:

Հետազոտական աշխատանքի արդյունքները լայնորեն կիրառվում են դասավանդման պրոցեսում, հաճախ դառնում են դասագրքեր ու ձեռնարկներ:

Բուհի ամենաուժեղ կողմերից մեկը հետազոտական գործունեությունն է հայկական՝ ավանդական և ժամանակակից երաժշտության ոլորտում: Գիտական և ստեղծագործական հետազոտությունը բավականաչափ զարգացած է:

### ***Եզրահանգում.***

ԵՊԿ-ն իրականացնում է հետազոտական բազմաճյուղ գործունեություն: Հետազոտությունը՝ լինելով ԵՊԿ-ի գործունեության կարևորագույն ոլորտներից մեկը, նպաստում է բուհի առաքելության և նպատակների իրագործմանը: Հետազոտական գործունեության արդյունքները մեծապես ներդրվում են ուսումնական գործընթացում: Փորձագիտական խումբը Չափանիշ 6 -ը գնահատում է բավարար:

~~W. Kelly~~  
W. Kelly  
W. Kelly

*ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները հիմնականում բավարարում են Չափանիշ 6-ի պահանջները:*

*Խորհրդատվություններ.*

1. Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել բուհի հետազոտական աշխատանքների արդյունքների միջազգայնացման համար:
2. Անհրաժեշտ է ունենալ հետազոտությունների իրականացման ընթացակարգ:

## VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն իր առաքելությանը, և նպատակներին համապատասխան իրականացնում է նպատակային միջոցառումներ՝ ուղղված մասնագիտացումների կրթական ծրագրերի կադրային և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովմանը, դրանց շարունակական համալրմանն ու որակական բարելավմանը:

ԵՊԿ-ն գործունեություն է ծավալում Երևան և Գյումրի քաղաքներում:

ԵՊԿ-ի գլխամասի և մասնաճյուղի մասնաշենքերն ապահովված են լսարանային, գործնական և հետազոտական գործընթացների կազմակերպման համար նախատեսված նյութատեխնիկական համապատասխան հազեցվածությամբ տարածքներով: Կոնսերվատորիայի և մասնաճյուղի տարածքում տեղակայված են օպերային ստուդիա, ֆոլկլորագիտության կաբինետ և լաբորատորիա (միայն գլխամասում), փորձերի համար նախատեսված դահլիճներ, գրադարաններ, ձայնադարաններ, բուժկետեր, սննդի սպասարկման կետեր, արհեստանոցներ:

Գրադարանում տեղակայված են համակարգիչներ, կուտակիչներ, ցանցային սարքեր և այլն: ԵՊԿ-ի գիտական և ուսումնամեթոդական գրադարաններում կենտրոնացված է բավարար քանակով ընդհանուր և մասնագիտական գրականություն (հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով): ԵՊԿ-ի գրադարանների ֆոնդի ընդհանուր քանակը, ներառյալ մասնաճյուղինը, կազմում է 255.752 միավոր (դասագրքեր, գրքեր, նոտային գրականություն): Ընդհանուր և մասնագիտական գրականության թարմացումը կատարվում է ըստ ԵՊԿ-ի ուսումնամեթոդական աշխատանքների ամենամյա հրատարակչական պլանի, նաև շնորհիվ նվիրատվությունների:

ԵՊԿ-ում, ներառյալ մասնաճյուղում, գործում են ձայնադարաններ:

Ազգագրական հարուստ ժառանգության պահպանման և տարածման համար մեծ նշանակություն ունեն Կոնսերվատորիայում գործող ֆոլկլորագիտության ամբիոնին կից գործող կաբինետն ու լաբորատորիան:

ԵՊԿ-ի գլխամասի տարածքում գտնվում է Օպերային ստուդիան, որի հիմնական նպատակը օպերային արտիստների բեմական մասնագիտական պատրաստումն է:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:**

Handwritten signature  
M. K. S.

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Կոնսերվատորիան յուրաքանչյուր տարվա վերջում կազմում է հաջորդ տարվա տարեկան նախահաշիվը, որը հաստատվում է Կառավարման խորհրդի կողմից:

Առանձին աղյուսակով տրվում է բյուջեի բաշխումը ըստ ԲՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի տարեկան նախահաշվի ռազմավարական ծրագրերի պլանավորումը կատարվում է Կոնսերվատորիայի գործունեության բոլոր բնագավառներում հիմնվելով ուսանողական համակազմի, կադրային և տեղեկատվական ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի վրա:

Բյուջետային համակարգը կատարելագործվում է՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխումը և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցումը առաջադրված ռազմավարական նպատակներին հասնելու համար:

Մահմանվում են տարեկան կողմնորոշիչ համամասնություններ՝ կոնսերվատորիայի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանն ու ենթակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների ծավալների միջև:

ԵՊԿ-ի ֆինանսական միջոցների պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականության իրականացման նպատակով ակտիվացվում են Կոնսերվատորիայի ծրագրերի, ծառայությունների, ԵՊԿ-ի գործունեության բոլոր բնագավառների գործընթացները:

Նախատեսվում է Կոնսերվատորիայի եկամուտների ընդհանուր ծավալում մեծացնել կրթական, գիտական ու տեղեկատվական վճարովի ծառայություններից գոյացած միջոցների հաշվեկշիռը՝ դրանց ցանկի ընդլայնման և եկամտաբերության բարձրացման ճանապարհով:

Միջոցները ծախսվում են բուհի ռեկտորի՝ համապատասխան ուղղություններով տրված հրամաններին համապատասխան: Գործընթացում ներառվում են ֆակուլտետների ղեկանները, ուսումնական գծով պրոռեկտորը:

Միջազգային կազմակերպություններից ֆինանսավորումները ստացվում են կոնկրետ դրամաշնորհային ծրագրերի համապատասխան, հրամանագրվում են և նպատակային ծախսվում:

Նյութական միջոցները տեղակայվում և շահագործվում են շնորհի ստացող ստորաբաժանումում:

Անհրաժեշտության դեպքում Կոնսերվատորիան օգտվում է անկախ աուդիտորական ընկերության ծառայությունից և ստանում աուդիտորական եզրակացություն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Կոնսերվատորիայի համակողմանի գործունեությունը միտված է առկա Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը և գտնվում է ղեկավարության ուշադրության կենտրոնում: Կարևորվում է Կոնսերվատորիայի մասնագիտական երաժշտական գործիքների վերազինումը (18 հատ ճապոնական «Kawai» ռոյալ, փողային և այլ գործիքներ), ձայնադարանի և ֆուլկլորագիտության լաբորատորիայի տեխնիկական միջոցների վերազինումը, Կոնսերվատորիայի էլեկտրոնային կայքի բարելավումը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:**

  
H. K. S. S.  




**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** Ինքնավերլուծության համաձայն Ելնելով տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների արդիականացման և վերահսկողության ապահովման անհրաժեշտությունից, կոնսերվատորիայում ներդրված է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, սակայն այն չի գործում: Հարկ է նշել, որ վարչական և ուսումնավարչական կազմը փաստաթղթաշրջանառությունն իրականացնում է ավանդական ձևով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ում առողջության պահպանմանն ուղղված ծառայությունները մատուցվում են բուժկետի միջոցով: Նմանատիպ ծառայություններ մատուցվում են նաև մասնաճյուղում: Բուժկետերում աշխատում են բժիշկը և բուժքույրը: Բուժկետերն ապահովված են առաջին բուժօգնության դեղորայքով և բժշկական գործիքներով:

Բուժկետերի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԵՊԿ-ի ռեկտորի համապատասխան հրամաններով, հրահանգներով և ուղղված են ուսանողների և աշխատողների առողջության և անվտանգության պահպանմանը նպաստելուն: Բուժում ստեղծված են հարմարություններ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների շրջանում իրականացվում են պարբերաբար հարցումներ՝ ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության վերաբերյալ:

### **ՂԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ**

Երևանի պետական կոնսերվատորիայի ռեսուրսները համապատասխանում են նպատակին և պատշաճ կերպով պահպանվում են:

ԵՊԿ-ում առկա է կրթական ծրագրերի /նաև հետազոտական գործունեություն/ իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը, որը կարելի է բավարար համարել:

Շահակիցներն ընդհանուր առմամբ բավարարված են այդ ռեսուրսներից: Բուհի բյուջեի ձևավորման ժամանակ անպայմանորեն հաշվի են առնվում նրանց պահանջները և հնարավորության սահմանում՝ բավարարում դրանք:

Բուհում գործում է ինտերնետ սրահ, որտեղ ուսանողները կարող են առանց սահմանափակման օգտվել դրանից:

2008-2012թթ պետական բյուջեից կատարված մուտքերը մնացել են գրեթե անփոփոխ /50 տոկոսի շուրջ/, աճել է Դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսները:

Նախահաշվի կազմմանը մասնակցում են բուհի բոլոր ներքին շահառուները: Ընդհանուր առմամբ նրանք գոհ են բյուջեի բաշխման արդյունավետությունից, գիտակցվում է բուհի ֆինանսական դժվարությունները:

Բուհը բյուջեի գրեթե 85%-ը հատկացնում է *դասախոսների աշխատավարձերին*: Բուհը սա նշել է որպես թույլ կողմ:

3p  
M. Hall  
[Signature]

Բուհն ունի կայուն ֆինանսական ռեսուրսներ կրթական ծրագրերի իրականացումը շարունակելու համար, սակայն, այն չունի նոր կրթական ծրագրեր մշակելու կարողություն, որոնք պահանջում են նոր սարքավորումներ և/կամ ծառայություններ: Ենթակետային և փաստաթղթավորման գործընթացների կառավարման քաղաքականություն բուհը չունի:

Բուհում կան, որոնց համար ստեղծվել են հատուկ պայմաններ, օրինակ կույր դաշնակահարների համար անվճար կազմակերպվում են անհատական պարապմունքներ, նման ուսումնառողներին կցվում են առանձին դասախոսներ:

Բուհում սովորող հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ստեղծված են հարմարություններ՝ վերելակ, հատուկ թեք հարթակ աստիճանանների վրա: Այդ ուսանողների հետ աշխատող դասախոսներն ունեն հաշմանդամների հետ աշխատելու փորձ:

Բուհում ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմ են հարցումները: Հարցման թերթիկները պարունակում են դրա վերաբերյալ անհրաժեշտ հարցադրումները: Հաշվի առնելով հարցման արդյունքները վերանորոգվել է շենքը՝ փոխվել են պատուհանները և վերանորոգվել սանհանգույցները:

Բուհում լուրջ խնդիր են մնում երաժշտական գործիքների ինտեսիվ օգտագործումը /պայմանավորված ուսանողների մեծ թվով/ և դրանց ֆիզիկական մաշվածությունը, լաբային գործիքների լարելու դժվարությունները: Ինչպես նաև ԵՊԿ-ն չունի համերգային սրահ և մարզադահլիճ:

ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղը չունի բավարար ռեսուրսներ՝ լսարանային տարածք, երաժշտական գործիքներ: Ունի բավականին հարուստ գրադարան և ձայնադարան:

Ֆինանսական աղբյուրների բազմազանեցումը և ֆինանսական ներհոսքի մեծացումը շարունակում են մնալ Կոնսերվատորիայի համար գերխնդիրներ:

#### **Եզրահանգում**

*Փորձագիտական խումբը գտնում է, որ ունենալով սահմանափակ ֆինանսական հնարավորություններ ԵՊԿ-ն կարողացել է ստեղծել արդյունավետ ուսումնական միջավայր: Առկա ռեսուրսները, հարմարությունները և գույքը նպաստում են սահմանված առաքելության և կրթական ծրագրի իրականացմանը: Զարգացման հնարավորությունները, սակայն, խնդրահարույց են: Զափանիշ 7-ը կարելի է գնահատել բավարար:*

#### **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

*Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները հիմնականում բավարարում են Զափանիշ 7-ի պահանջները:*

#### **Խորհրդատվություններ.**

1. Անհրաժեշտ է խթանել բոլոր ջանքերը՝ ուղղված բուհի տարածքում պատշաճ համերգասրահի կառուցմանը:
2. Անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել բուհի ռեսուրսային բազայի արդյունավետությունը:
3. Անհրաժեշտ է բարելավել ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղի ռեսուրսային բազան

### **VIII. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**ԶԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Ernst  
W. Kell  


**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ.**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն հասարակության և մյուս շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովում է սահմանված ձևաչափերով՝ ֆակուլտետների, բաժանմունքների, ամբիոնների ուսումնական և գիտական տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև վարչատնտեսական ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա ձևավորվող մեկ ընդհանուր տարեկան հաշվետվության միջոցով: Դրանք կառուցվում են ըստ ԵՊԿ-ի ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների:

ԵՊԿ-ում գործում է հաշվետվությունների ներկայացման երկու տեսակ՝ ուսումնական գործունեության հաշվետվություն և գիտական գործունեության հաշվետվություն: Հաշվետվությունները ներկայացվում են Գիտական խորհրդի նիստում տարին մեկ անգամ: Գիտական խորհրդի քննարկումներից հետո ներկայացվում է Կոնսերվատորիայի Կառավարման խորհրդի նիստում, Ռեկտորի ամփոփ հաշվետվության մեջ:

Կոնսերվատորիայի կրթական ընթացքի առանձնահատկություններից է դասախոսների և ուսանողների մասնակցությունը ՀՀ բոլոր երաժշտական մշակութային իրադարձություններին՝ անխտիր, որն իր հերթին ապահովում է ԵՊԿ-ի հաշվետվությունը թե՛ պետության, թե՛ հասարակության առաջ:

Հաշվետվության տեսակներից է նաև ԵՊԿ-ի մասնակցությունն ամենամյա կրթական ցուցահանդեսներին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի կողմից ծավալվող բազմաբնույթ՝ կրթական, կատարողական, հետազոտական գործունեությունը անդադար լուսաբանվում է մամուլում և հեռուստատեսությամբ:

Կոնսերվատորիայում կատարվող աշխատանքների լավագույն արդյունքների ներկայացմանն ու տարածմանը նպաստում է «ԵՊԿ-ի հրատարակչության» գործունեությունը: ԵՊԿ-ում հրատարակվում են «Երաժիշտ» թերթը, որն արձագանքում է ԵՊԿ-ի կողմից կատարված յուրաքանչյուր քայլին (կազմակերպչական, ստեղծագործական, գիտական), ինչպես նաև «Երաժշտական Հայաստան» ամսագիրը, ուր տպագրվում են բազմաբնույթ նյութեր՝ գիտական, քննադատական, հոբբեյանական և այլն: Բացի այդ, «ԵՊԿ-ի հրատարակչության» կողմից հրատարակվում են մեթոդական ձեռնարկներ, մենագրություններ, նոտային գրականություն և այլն:

ԵՊԿ-ի գլխամասի մի քանի տեսանելի հաստատվածներում տեղադրված են պարբերաբար թարմացվող հայտարարությունների ցուցանակները:

ԵՊԿ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կանոնակարգային և ընթացակարգային փաստաթղթերը ներկայացված են «Կրթության Որակ և Համապատասխանություն» ուղեցույցներում:

Տեղեկատվության տարածմանը նպաստում է կոնսերվատորիայի պաշտոնական կայքը՝ [www.conservatory.am](http://www.conservatory.am), [www.youtube.com](http://www.youtube.com) կայքում տեղադրված տեսագրությունները:

Տեղեկատվության հասանելիության տեսանկյունից առավել քան արդիական է դարձել ինֆորմացիայի հրապարակումը սոցիալական ցանցերի միջոցով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն գործունեությունը ծավալում է մի քանի ուղղություններով՝ կրթություն, հետազոտություն, լուսաբանում, մասնակցություն ՀՀ երաժշտական կյանքին և այլն: Երաժիշտն

and  
well  
[Signature]



ունի հասարակության հետ անմիջական կապ հաստատելու մեծ հնարավորություն: Կատարողների ելույթները ՀՀ բոլոր համերգասրահներում, դպրոցներում, բուհերում տալիս են անմիջական շփման հնարավորություններ: ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների լուսաբանման ելույթները Երևանի և ՀՀ մարզերի դպրոցներում, բուհերում ունկնդիրներին տալիս են քննարկումների և կարծիքների արտահայտման հնարավորություն:

ՀՀ երաժշտական մշակութային բոլոր միջոցառումների վերաբերյալ ՁԼՄ-ների և ՀՀ հեռուստատվիքների ողջ անդրադարձը հանդես է գալիս իբրև հետադարձ կապ, քանի որ իրականացվում է ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, շրջանավարտների և ուսանողների միջոցով:

ԵՊԿ-ի ֆեյսբուքյան պաշտոնական էջը նպաստում է նաև շրջանավարտների հետ բուհի կապը բարելավելուն և ընդլայնելուն:

Հետադարձ կապի մեխանիզմների արդյունավետությունը չի ուսումնասիրվել:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:**

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն լուսաբանման գործունեության շրջանակներում ներկայացնում է ազգային հոգևոր արժեքներ, դաստիարակում դասական և ժամանակակից երաժշտության ունկնդիր, փորձում ըստ հնարավորինս պայքարել կենցաղային ցածրորակ երաժշտական դրսևորումների դեմ:

Շահառուներին հասանելի են «ԵՊԿ հրատարակչության» կողմից տպագրված պարբերականները (թերթ, ամսագիր, գիտաժողովների նյութեր), մենագրությունները, մեթոդական ձեռնարկները, նոտային գրականություն և այլն:

Գիտելիքների փոխանցման մեխանիզմներից են ԵՊԿ-ի կողմից իրականացված Լրացուցիչ կուրսերը, Նախապատրաստական դասընթացները, որոնք նախատեսված են ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների համար. մի դեպքում՝ որևէ երաժշտական գործիքի տիրապետելու նպատակով, առանց տարիքային սահմանափակումների, մյուս դեպքում՝ «երգեցողություն» և «գործիքային կատարողականություն» մասնագիտացումների դիմորդներին պատշաճ մակարդակով ընդունելության քննություններին նախապատրաստելու համար:

Գիտելիքների փոխանցման մեխանիզմներից են նաև Երևանում և ՀՀ-ի մարզերում իրականացվող համերգ-դասախոսությունները, որոնք իրականացվում են ԵՊԿ-ի «Երաժշտական գրուցակից»-ի նախաձեռնությամբ:

ԵՊԿ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները հրավիրվում են ամենատարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող երաժշտական միջոցառումների որպես կազմակերպիչ, կատարող, ժյուրիի նախագահ կամ անդամ և այլն: Ջուզահեռաբար, ԵՊԿ-ի ներկայացուցիչները սեփական նախաձեռնությամբ, անշահախնդիր, տեղում կազմակերպում են պարապմունքներ:

ԵՊԿ-ի գիտելիքների փոխանցման մեխանիզմներից են նաև մատուցվող անվճար խորհրդատվական ծառայությունները օտարերկրյա քաղաքացիներին մասնագիտական կողմնորոշման նպատակով:

Երաժշտամշակութային հարցերով ԵՊԿ-ին դիմում են ինչպես ՀՀ տարբեր կազմակերպություններ, ՁԼՄ-ներ, այնպես էլ անհատ անձիք և կազմակերպություններ արտերկրից, մասնավորապես սփյուռքից:

Սատուցված լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունը և արդիականությունը բուհի կողմից չի ուսումնասիրվում:

### **ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ**

Բուհում գործում է հաշվետվողականության որոշակի կարգ: Ռեկտորի տարեկան ամփոփ հաշվետվությունը Կառավարման խորհրդի անդամների միջոցով /որոնց մեծ մասը նաև արտաքին շահակիցներ են / հասնում է բոլոր շահառուներին:

30  
M. W. J.  
[Signature]

Հաշվետվությունը տպագրվում է բուհի թերթում: Այդ նպատակով ակտիվորեն պետք է օգտագործել կայք էջը:

Բուհի գործընթացների, ընթացակարգերի թափանցիկության և հասանելիության նպատակով բուհի կողմից կիրառվում են բազմազան միջոցներ, այդ թվում՝ բուհի էլեկտրոնային կայքը, բայց քանի որ վեբ-կայքը վերակառուցման փուլում է, չկա որևէ հստակ փաստ, որ ընթացակարգերը հասանելի են հանրությանը: Մակայն շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ բոլորը տեղեկացված են և որևէ բան գաղտնի չի պահվում:

Բուհն օգտագործում է իր բացառիկ հնարավորությունները՝ հասարակության հետ հետադարձ կապեր իրականացնելու համար: Հատկապես կարևորվում է կատարողների ելույթների մեծ աշխարհագրությունը, որոնց ժամանակ ունկնդիրների հետ կատարվում են տարաբնույթ քննարկումներ, լսվում են արտահայտված կարծիքներ:

Հաստատությունը ներգրավված է տարածաշրջանային/ռեգիոնալ քաղաքադականության մշակման գործընթացում: Շրջանավարտները և այլ սոցիալական գործընկերներ ներգրավված են այս գործընթացում: Կոնսերվատորիայի որոշ դասախոսներ ակտիվ են մասնագիտական գործունեության ոլորտում և նախաձեռնում են զգալի թվով մշակութային իրադարձություններ: Լինելով միակ երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանում, բնական է, որ Կոնսերվատորիան ունի նման կարևորություն պահպանելու, ամրապնդելու և զարգացնելու կայք այլ մշակութային օջախների հետ: Կարիք կա պարբերաբար հանդիպումներ կազմակերպել արտաքին շահառուների, աղ թվում՝ շրջանավարտների հետ՝ տարաբնույթ հարցեր քննարկելու համար: Համենայն դեպս արտաքին շահառուները և շրջանավարտները պատրաստակամ են նմանատիպ հանդիպումների ու զանազան քննարկումների:

Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման գործը բուհն իրականացնում է պատշաճ մակարդակով, լիարժեքորեն, օգտագործելով իր հնարավորությունները:

Տեղական և տարածաշրջանի համայնքներին կրթական ծառայությունների տրամադրումն ապահովում է գիտելիքների (արժեքների) փոխանցումը հասարակությանը: Դասախոսությունները, համերգները և այլ միջոցառումներն ընդլայնում են ընդհանուր գիտակցության մակարդակը: Բուհը մեծ ներդրում է կատարում երկրի քաղաքացիների երաժշտական ճաշակը զարգացնելու գործում:

Բուհին մնում է պարզել, թե մատուցված լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը:

**Եզրահանգում.** ԵՊԿ-ն միտված է բազմազանեցնել տեղեկատվության տարածման ձևերը, միջոցները և շրջանակները շեշտը դնելով արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ինտենսիվ կիրառության և այն ներքին շահակիցներից դեպի արտաքին շահակիցներն ուղղելու վրա: ԵՊԿ-ի կայքը գտնվում է վերակազմավորման՝ բարեփոխման, կատարելագործման փուլում (կառուցվածքային, բովանդակային և տեխնիկական առումներով): ԵՊԿ-ն միտված է կազմակերպել բուհի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, կոորդինացնել և նպատակաուղղել լրատվական-գովազդային բոլոր միջոցները ԵՊԿ-ի դրական իմիջի պահպանմանն ու ամրապնդմանը, նրա հասարակական վարկանիշի բարձրացմանը:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.** Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են Չափանիշ 8-ի պահանջները:

**Խորհրդատվություններ.**

1. Անհրաժեշտ է ավարտին հասցնել վեբ-կայքի վերակառուցման աշխատանքները և երաշխավորել դրա պատշաճ պահպանումը:
2. Տորմալիզացնել շրջանավարտների հետ կապն ու նրանց հետ կապված գործողությունները:
3. Ուսումնասիրել գործող մեխանիզմների արդյունավետությունը:

Handwritten signature  
The first  
Handwritten signature

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԳԱՅՆԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ:** Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** *Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Ռազմավարական նպատակներից ելնելով, ԵՊԿ-ն ձգտում է տրամադրել միջազգային չափանիշներին համահունչ կրթություն, դառնալ երաժշտական բարձրագույն կրթության տարածաշրջանային առաջատար կենտրոն, ընդլայնել միջազգային համագործակցության ցանցը: 2012 թ. դեկտեմբերին ԵՊԿ կառավարման խորհուրդը հաստատել է միջազգային ոլորտի զարգացման ռազմավարությունը: Մակայն չունի փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՊԿ-ն 2012թ. հուլիսից Եվրոպական Կոնսերվատորիաների Ասոցիացիայի լիիրավ անդամ է, ինչը մեծապես նպաստում և ապահովում է ԵՊԿ-ի՝

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ.** *ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** Արտաքին կապերը ԵՊԿ-ում համակարգում է միջազգային կապերի գծով պրոտեկտորը, որի ղեկավարության ներքո աշխատում է միջազգային կապերի բաժինը: Բաժնի գործունեության խնդիրներից է՝ ընդլայնել ԵՊԿ-ի արտաքին և միջազգային կապերը՝ համագործակցելով բուհի բոլոր ստորաբաժանումների հետ, միջազգային տարաբնույթ կրթական, գիտական, հասարակական, բարեգործական և այլ կազմակերպությունների հետ: Բաժնի գործառույթներից է տարաբնույթ մշակութային միջոցառումների համերգների, մրցույթների, փառատոների և գիտաժողովների կազմակերպումը: Մակայն այդ գործընթացները Գյումրու մասնաճյուղում դեռևս չկա համապատասխան ստորաբաժանում:

Բուհի միջազգային կապերի բաժնի գործունեության գնահատման հիմնական ցուցանիշներն արտահայտված են միջազգային մասնագետների կարծիքների միջոցով, որոնք հարցազրույցի տեսքով տպագրվել են ՀՀ-ի ԶԼՄ-ներում, տարածվել սոցիալական ցանցերում և այլն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ գ.** *ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:*

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն միակ երաժշտական բարձրագույն կրթական հաստատությունն է Հայաստանում, այդ իսկ պատճառով Կոնսերվատորիան համագործակցում է բոլոր տեղական երաժշտական կրթական հաստատությունների (քոլեջների, դպրոցների և այլն), ինչպես նաև գիտական, հասարակական, բարեգործական և այլ կազմակերպությունների հետ: ԵՊԿ-ն 2012թ. հուլիսից դարձել է Եվրոպական Կոնսերվատորիաների Ասոցիացիայի լիիրավ անդամ:

2012 թ. ընթացքում կնքվել են նոր և վերակնքվել նախկին համագործակցության պայմանագրեր 16 միջազգային հաստատությունների հետ, այդ թվում Ռուսաստանի, Բելոռուսիայի, Ուկրաինայի, Վրաստանի, Մերձբալթյան երկրների, Բելգիայի, ԱՄՆ-ի,

Handwritten signature or initials, possibly including the name "M. M. S." and a stylized flourish below.



Հովանդիայի, Մոնտենեգրոյի երաժշտական հաստատությունների հետ: ԵՊԿ-ն շարունակում է համագործակցությունը ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջազգային հիմնադրամի հետ:

Շարունակվում է համագործակցությունը նաև ԱՊՀ երկրների երիտասարդական երաժշտական ակադեմիայի հետ, գեղարվեստական դեկավար Յու. Բաշմետ: Համագործակցության շրջանակներում ԵՊԿ-ի ուսանողները 2012թ.մասնակցել են վարպետության դասերին և ելույթ ունեցել համատեղ համերգներում:

Կատարողական դպրոցների զարգացման և տարածման տեսակներից են վարպետության դասերը, երբ տարբեր երկրներից հրավիրված լավագույն երաժիշտ-կատարողները ներկայացնում են իրենց կատարողական արվեստի առանձնահատկությունները: Վարպետության դասեր են տվել ԱՄՆ-ից, Բելգիայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Իտալիայից, Իսպանիայից, Ռուսաստանից և այլ երկրներից հրավիրված մասնագետներ:

**ՉՍՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:**

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովումն ի սկզբանե չի գտնվել բուհի ուշադրության կենտրոնում (խոսքը ռուսերենի մասին չէ): Մակայն, սկսած 2010թ.-ից, ԵՊԿ-ն կազմակերպում է TOEFL-ի դասընթացներ ասպիրանտների համար: Դասախոսների համար անգլերեն լեզվի փորձնական դասընթացներ են կազմակերպվում ԵՊԿ-ի լեզվի ամբիոնի կողմից: ԵՊԿ-ի ուսանողների կրթական ծրագրերում առկա են օտար լեզվի դասընթացները ՄԿԾ-ների չափորոշիչներին համապատասխան:

ԵՊԿ-ի «Ակադեմիական վոկալ» մասնագիտացման կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են իտալերեն լեզուն՝ ելնելով մասնագիտական պահանջներից:

Օտար լեզվի իմացությամբ դասախոսները սակավաթիվ են, քանի որ ԵՊԿ-ի օտարերկրյա ուսանողներն անցնում են նախապատրաստական դասընթացներ, ուր սովորում են հայերեն: Բացի այդ, օտարերկրյա դիմորդների մեծամասնությունը սփյուռքահայեր են:

## **ԴՍՏՈՂՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնական հաստատությունը վերջին տարվա ընթացքում բավական քայլեր է կատարել արտաքին կապերի հաստատման և միջազգայնացման ուղղությամբ, մասնավորապես մշակվել է միջազգային ոլորտի զարգացման ռազմավարությունը, կնքվել են մի շարք համագործակցության պայմանագրեր, դարձել է ԵԿԱ-ի լիիրավ անդամ, մասնակցել է բազմաթիվ միջազգային մրցույթների, ինչպես նաև ինքն է կազմակերպել նմանատիպ միջոցառումներ: Մակայն ուսումնական գործընթացի տեսանկյունից կատարված աշխատանքները դեռևս բավարար չեն միջազգայնացման համար:

Միջազգայնացումը հատկապես կարևոր է, քանի որ ԵՊԿ-ն լինելով միակը հանրապետությունում չունի մրցակցություն ներսում, իր հետագա զարգացման և որակի բարելավման համար պետք է նպատակուղղված լինի դեպի նմանատիպ միջազգային այլ հաստատություններ, ապահովի ուսանողների և դասախոսների շարժունությունը: Դասախոսները որոշակի չափով ծավալում են միջազգային համագործակցություն, բայց նրանց գործողությունները ոչ պաշտոնական են և համակարգված չեն:

**Եզրահանգում.**

Handwritten mark or signature

Handwritten mark or signature

Handwritten mark or signature

Ելնելով վերը նշվածից փորձագիտական խումբը գտնում է, որ չնայած ձեռնարկած քայլերի բուհը ուսումնական գործընթացի կազմակերպման առումով դեռևս գտնվում է միջազգայնացման նախնական փուլում, ուստի Չափանիշ 9-ը բավարար չէ:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները չեն բավարարում Չափանիշ 9-ի պահանջները:**

**Խորհրդատվություններ.**

1. Մշակել փորձի փոխանակմանը, միջազգային կապերի զարգացմանը նպաստող հստակ քաղաքականություն և կանոնակարգեր, շեշտադրելով բուհի միջազգայնացումը:
2. Մասնագիտության կրթական ծրագիրը մոտեցնել միջազգային չափանիշներին:
3. Ապահովել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության բավարար մակարդակը:

## **X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**ՉԱՓԱՆԻՇ 10.** ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա.** *ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:*

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ Որակի ներքին ապահովման բաժինը ստեղծվել է 2011թ.:

ԵՊԿ-ի Գիտական խորհրդի կողմից հաստատվել է ՈՆԱԲ-ի ռազմավարությունը, որն ուղղորդվում է ԵՊԿ-ի Ռազմավարական ծրագրի գործունեության բոլոր բնագավառներում որակի անընդհատ բարելավմանը: Գիտական խորհրդի կողմից հաստատվել է ԵՊԿ-ի Որակի ներքին ապահովման բաժնի կանոնակարգը:

Բաժինը, համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ, ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար մշակում է քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Բաժինը հետևողականորեն նպաստում է բուհի որակի ապահովմանը և այն գնահատող մշակույթի ձևավորմանը՝ զարգացնելով այն և իրագործելով որակի շարունակական ամրապնդման ռազմավարությունը:

Համաձայն ԵՊԿ-ի ռեկտորի N17-Լ 09.12.2011թ. հրամանի, ՈՆԱԲ-ի գործառույթների, Կոնսերվատորայիում նախապատրաստվել և բաժնի կողմից իրականացվել է ԵՊԿ-ի բոլոր ստորաբաժանումների և մասնաճյուղի գործունեության որակի գնահատման գործընթացը, որն իրականացվել է բազմագործոն համակարգի հիման վրա:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ բ.** *Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:*

**ԱՐՅՈՒՆՔՆԵՐ.** Որակի ներքին ապահովման կառույցն իր գործընթացների կառավարման համար ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով: Մասնավորապես, ՈՆԱԲ-ը հազեցած է համապատասխան տեխնիկայով (համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպող, պատճենող և սքան անոդ սարք, պրոյեկտոր, էկրան և այլն): Բաժինն ունի 4 աշխատակից:

Որակի ապահովման մշակույթի ձևավորումը ԵՊԿ-ում սկզբնական փուլում է, այդ իսկ պատճառով կա վերապատրաստումներ անցած մասնագետների պահանջ:

30

11/11

11/11

**ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:**

**ԱՐՊՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ում Որակի ապահովմանն առնչվող բոլոր գործընթացները պաշտոնապես հաստատվում են Գիտական խորհրդի կողմից՝ համաձայն դրանց հաստատման գործող մեխանիզմների:

Կոնսերվատորիայի Ռազմավարական ծրագիրը, որում ընդգրկված են որակին առնչվող քաղաքականությունը, ՈՆԱԲ-ի ռազմավարությունը և ընթացակարգերը հրատարակված են ուղեցույցներում:

ԵՊԿ-ի անձնակազմի անդամները միաժամանակ նաև ՀՀ Պետական ֆիլիարմոնիկ նվագախմբի, Օպերային թատրոնի, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ են, այդ իսկ պատճառով անցկացված հարցումներում նրանց կարծիքը արտահայտում է և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցների դիրքորոշումները:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:**

**ԱՐՊՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի որակի ապահովման ստորաբաժանումը գտնվում է Կոնսերվատորիայի ղեկավարության ուշադրության կենտրոնում՝ հաշվի առնելով այդ կառույցի կարևորությունը բուհի գործունեության բոլոր ոլորտներում: Այդ ստորաբաժանման գործունեության շրջանակը բխում է Կոնսերվատորիայի Ռազմավարական ծրագրի իրականացմանն ուղղված կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերից, Գիտական խորհրդի, Ռեկտորատի որոշումներից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՊԿ-ի Որակի ապահովման կառույցը ստեղծվել է 2011թ. և դեռ շատ երիտասարդ է, դեռ շուտ է խոսել համակարգի վերանայման մասին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:**

**ԱՐՊՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ն՝ հիմք ընդունելով կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողության միասնական քաղաքականությունը, իր 2012-2017թթ. Ռազմավարական ծրագրում հաշվի է առել սահմանված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների/չափորոշիչների պահանջները: Նշվածն արտացոլված է Կոնսերվատորիայի զարգացման հեռանկարների ուղղություններում, նպատակներում և խնդիրներում: Վերջիններս ներկայացված են կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում:

Կոնսերվատորիայի Որակի ապահովման հետազոտ քայլերն են՝ նախապատրաստել բուհը կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին՝ բարձրագույն կրթության որակի արտաքին արժևորման պետական միասնական չափանիշների պահանջներին համապատասխան:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:**

**ԱՐՊՈՒՆՔՆԵՐ.** ԵՊԿ-ի գործունեության հրապարակայնությունը և Որակի ապահովման ներքին համակարգի թափանցիկությունն ապահովվում է դրա մասին պարբերական տեղեկատվության ներկայացմամբ՝ օգտագործելով հնարավոր բոլոր ներքին և արտաքին միջոցներ՝ հանդիպումները դասախոսական կազմի և ուսանողների հետ, քննարկումներն ու

Handwritten text, possibly a signature or initials, consisting of three lines of cursive script.



մտքերի փոխանակումները Կոնսերվատորիայում, ԵՊԿ-ի լրատվական միջոցների և կայքի օգտագործումը, ԶԼՄ-ները և այլն:

Բուհի գործունեության թափանցիկության դրսևորում է ռեկտորի տարեկան հաշվետվությունը, որը ներառում է ինչպես ԵՊԿ-ի տարեկան գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, նույնպես և ֆինանսական հաշվետվություն:

Բուհի գործունեության թափանցիկության ևս մեկ դրսևորում են Որակի ապահովման համակարգի կողմից հրատարակված ուղեցույցները, որտեղ ներառված են ԵՊԿ-ի Ռազմավարական ծրագիրը, ՌՄ Ժամանակացույցը, ԵՊԿ-ի Կանոնադրությունը, ԵՊԿ-ի կարգերը, անցկացված հարցումների վերլուծության արդյունքները և այլն:

Բուհի գործունեության թափանցիկության դրսևորում են նաև տարբեր հանդիպումները ուսանողների ու դասախոսական կազմի հետ, հրապարակային քննարկումները: Օրինակ, ՌՆԱ բաժնի ու ԵՊԿ-ի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ բոլոր ֆակուլտետների ուսանողների հետ անցկացվել են սեմինար-քննարկումներ՝ կրթության որակի ապահովման խնդիրների վերաբերյալ:

### **ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ**

Բուհում ձևավորվել է որակի ներքին ապահովման բաժին իր կանոնակարգով, հստակ գործառույթներով, գործունեության պլանավորմամբ: Բաժնի աշխատանքներին նպաստել է ԵՊԿ-ի մասնակցությունը ՄԻԳ-ի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված «Որակի ապահովման ներքին համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագիրը: Մշակվել է որակի ապահովման քաղաքականությունը, որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր: Կազմվել է «Որակի ապահովման ուղեցույցը»:

ՌՆԱԲ-ի կողմից որոշակի չափանիշներով կատարվել է բուհի ստորաբաժինների գործունեության որակի գնահատում:

Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով բուհը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական որոշակի ռեսուրսներ, որոնց արդյունավետությունը գնահատել դեռևս հնարավոր չէ:

Որակի մշակույթը բուհում դեռևս ձևավորման փուլում է, սակայն հաստատությունը վճռական է միավորելու ջանքերը և բուհում ստեղծելու որակի մշակույթ: Այդ նպատակով իրականացվել են որոշակի գործողություններ:

Որակի ապահովման գործառույթներում ԵՊԿ-ն կարևորում է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը, որը կարգավորվում է ԵՊԿ-ի ուսանողների ու դասախոսների, ինչպես նաև հիմնական գործատու կազմակերպությունների ու աշխատաշուկային առնչվող հասարակական կառույցների հանդիպումների ընթացքում, հարցումների միջոցով: Առկա են փաստեր, որ ուսանողներն ու շահակիցներն այս գործընթացի կարևոր մաս են կազմում:

Քանի որ որակի ապահովման գործընթացները համեմատաբար նոր են հաստատությունում, դրանք դեռ չեն հասել պարբերական վերանայման փուլին: Պետք է նկատի ունենալ, որ այն մշտապես վերանայման կարիք ունի՝ բուհի առաքելությանը և ռազմավարական պլանավորմանը համապատասխան: Սակայն ներկայացված նյութերից հստակ չէ, թե արդյո՞ք այդ գործընթացը պաշտոնապես պլանավորված է:

Որակի ապահովման գործընթացները դեռևս լիարժեքորեն համակարգված չեն, և, հետևաբար, հնարավոր չէ խոսել գործընթացի թափանցիկության մասին, և քանի որ այն նոր է, առկա չէ հետադարձ կապ/ արձագանք վերջինի որակի մասին:

### **Եզրահանգում.**

Փորձագիտական խումբը եզրակացնում է. ԵՊԿ-ն կարևորելով կրթության որակի ապահովումը, Եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշների հիման վրա մշակվել է բուհի գործունեության որակի գնահատման և ապահովման ներիբուհական համակարգի

Handwritten signature or initials, possibly including the name "James".

ձևավորման հայեցակարգային սկզբունքները, ստեղծել է որակի ներքին ապահովման կառույց՝ ՈՆԱ բաժին:

Բաժինն իրականացրել է ԵՊԿ-ի բոլոր ստորաբաժանումների գործունեության ինքնավերլուծությունը: Սկսվել է որակի ապահովման ներբուհական պլանավորված գործընթացը: Վերանայվել և լրամշակվել են ԵՊԿ-ում գործող որոշ կարգեր, մշակվել են նոր ընթացակարգեր: Փորձ է արվել ներգրավել տարբեր շահագրգիռ կողմերի որակի ապահովման գործընթացներում, անցկացվել են հարցումներ, արդյունքները վերլուծվել և հրապարակվել են: Այս ամենը լավ հիմք է որակի մշակույթ ձևավորելու համար:


Հաշվի առնելով, որ բուհում որակի ապահովման համակարգը դեռ կայացման փուլում է, չափանիշը կարելի է համարել բավարար:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ. Բուհի ինստիտուցիոնալ կարողությունները բավարարում են Չափանիշ 10-ի պահանջները:**

**Խորհրդատվություն.**

1. Ապահովել սահմանված ընթացակարգերի լիարժեք կիրառելիությունը:
2. Որակի ապահովման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընդլայնել մարդկային, կյութական և ֆինանսական ռեսուրսները:
3. Որակի մշակույթի ձևավորման համար ապահովել ավելի շատ շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, հատկապես դասախոսական կազմի:
4. Մշակել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման կանոնակարգն ու հետադարձ կապի մեխանիզմները և ապահովել դրանց կիրառելիությունը:
5. Ամրապնդել կառավարման և որակի ապահովման համակարգերի կապը:

Խմբի ղեկավար



Գ. Հովհաննիսյան

**ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ**

| <i>Չափանիշ</i>                                   | <i>Եզրակացություն</i> |
|--|-----------------------|
| 1. Առաքելությունը և նպատակները                   | Այո                   |
| 2. Կառավարումն ու վարչարարությունը               | Այո                   |
| 3. Կրթական ծրագիրը                               | Այո                   |
| 4. Ուսանողները                                   | Այո                   |
| 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմը | Այո                   |
| 6. Հետազոտությունը և զարգացումը                  | Այո                   |
| 7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները                 | Այո                   |
| 8. Հասրակական պատասխանատվությունը                | Այո                   |
| 9. Արտաքին կապերը և միջազգայնացումը              | Ոչ                    |
| 10. Որակի ապահովման ներքին համակարգը             | Այո                   |

Handwritten mark or signature

Handwritten text, possibly a name or date

Handwritten signature or mark

## VI. ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

### Դիտարկումներ

1. Ուսումնական հաստատությունը միանշանակորեն գտնվում է անցումային փուլում:
2. Տպավորություն է ստեղծվում, որ Կոնսերվատորիան զգուշորեն է մոտենում նորարարություններին:
3. Պրոֆեսորադասախոսական կազմը բավականաչափ բաց չէ երաժիշտների համար առկա կարիերայի այլ հնարավորությունների հարցում, ինչպես օրինակ մենեջմենթ կամ «սոցիալական գործառույթներ»:
4. Ուսումնական պլանների մշակումը համեմատաբար պահպանողական է: Պրոֆեսորադասախոսական կազմը պետք է որդեգրի որոշակի լայն (արտաքին փորձը հաշվի առնող) մոտեցում ուսումնական պլանների բովանդակությունն ու իրականացման մեթոդները սահմանելիս:
5. Չկա միջազգայնացման ռազմավարություն (հատկապես արտասահմանյան ուսանողների հավաքագրման): Որոշակի չափով դասախոսները ծավալում են միջազգային համագործակցություն, բայց նրանց գործողությունները ոչ պաշտոնական են և արտահայտված չեն բուհի ուսումնական պլաններում և կրթական գործընթացում:
6. Չեն իրականացվել շրջանավարտների հարցումներ, ինչպես նաև բացակայում է հաստատության և շրջանավարտների համագործակցությունն ապահովող լավ մշակված համակարգ:
7. Հաստատությունում կա որակի բարելավման բաժին, որն ունի երկու աշխատակից: Սա, որոշ առումով, երաշխավորում է որակի շարունակական բարելավման գործընթացի կայունությունը, պարզապես անհրաժեշտ է տրամադրել բավարար ֆինանսավորում, երբ առկա գրանտային ծրագրով հատկացումները կսպառվեն: Այլապես բուհը չի կարող առաջ շարժվել:
8. Հաստատությունը խթանում է իր հետազոտական գործունեությունը և Հայ-ժող երաժշտության ամբիոնում իրականացվող տպավորիչ հետազոտական գործունեությունը պետք է գնահատել:

### Գործընկերային խորհրդատվություններ

- Բուհը պետք է առավել հստակ սահմանի իր ինքնությունն ու նպատակները, ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ առանձին կրթական ծրագրերի մակարդակով:
- Սահմանել յուրաքանչյուր դասընթացի հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև փնտրել ուղիներ դրանց զարգացման և խթանման համար:
- Անհրաժեշտ է մշակել և կիրառել ուսումնառության արդյունքներ, հաշվի առնելով Կոնսերվատորիաների եվրոպական ասոցիացիայի մշակված ուսումնառության արդյունքները և Դուբլինյան նկարագրիչները:
- Հաստատության առաքելությունն է ստեղծել ուսանողակենտրոն ուսումնառության միջավայր: Հետևաբար, մենք անկեղծ խոհուրդ ենք տալիս բուհին ճկուն դարձնել ուսումնական պլանը՝ ուսանողներին տալով հնարավորություն ազատ ընտրելու կամընտրական առարկաներ՝ իրենց հիմնական առարկայական ոլորտից դուրս, ինչպես նաև մասնակցելու տարբեր ծրագրերի/նախագծերի և դրանց համար ստանալու կրեդիտներ:
- Գնահատման չափանիշները պետք է կապված լինեն այն ուսումնառության արդյունքների հետ, որոնք ուսանողները պետք է ձեռք բերեն:
- Գնահատման սանդղակները պետք է ուսումնասիրվեն անոմալիայի/անկանոնության (anomaly) տեսանկյունից, դրանց միջև պետք է լինի հստակ փոխկապակցում, ինչպես նաև այլ առարկաների համապատասխան սանդղակների հետ:
- Հետազոտության դերը ֆակուլտետներում պետք է ավելի հստակ սահմանել:

Handwritten signature and initials, possibly including the name "W. H. S." and a stylized flourish below.



- Տակուլտետները/բաժինները պետք է ապահովեն հետազոտությունների արդյունքները ուսումնական պլաններում արտահայտելու մեխանիզմներ:
- Մահմանեք, թե ինչ դեր պետք է ունենա հետազոտությունը ուսանողների կրթության մեջ:
- Բյուջեի բաշխում:
- Երաժշտական գործիքների թիվը բավարար է, բայց դրանց մակարդակը պետք է լինի շատ ավելի բարձր:
- Գրադարանում արտասահմանյան գրականության պակաս կա, հավանաբար, բուհը չի անդամակցում որևէ հետազոտական տվյալների բազաների:
- Անհրաժեշտ է ավելացնել գրադարանի և ձայնադարանի աշխատանքային ժամերը՝ ուսանողներին բաց մուտք ապահովելու համար:
- Պետք է ապահովել ուսանողների, նախկին ուսանողների և մասնագիտական մարմինների առավել համակարգված ներգրավում դասընթացների մշակման և վերանայման գործընթացներում, քանի որ նրանց տված արձագանքը/հետադարձ կապը շատ կարևոր է՝ ստուգելու դասընթացի համապատասխանությունը և թե ինչպես է այն ընկալվում տարբեր շահակիցների կողմից:
- Ուսանողներն ու դասախոսները պետք է տեղեկացվեն հարցումների արդյունքների և դրանց հիման վրա իրականացված քայլերի վերաբերյալ:
- Կապ մասնագիտական ոլորտի հետ. անհրաժեշտ է մշակել մեխանիզմ, որի միջոցով կքննարկվի և կպլանավորվի համագործակցությունը մասնագիտության ներկայացուցիչների հետ՝ նրանց արձագանքը շրջանավարտների և ուսումնական պլանների վերաբերյալ ստանալու նպատակով, ինչը կնպաստի դասավանդման որակին և համապատասխանությանը տվյալ մասնագիտությանը


Spent  
money  
A

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

**Գուրգեն Հովհաննիսյան** Ստացել է աշխարհագրության ոլորտում դիպլոմավորված մասնագետի որակավորում: 2006 թ.-ին ստացել է Աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ «Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմնախնդիրը ՀՀ-ում», 2007 թ.-ին՝ դոցենտի գիտական կոչում: Հետազոտություններն ընդգրկում են կրթության, կրթության կառավարման ոլորտները: Աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրել է. 2006 –ից մինչև հիմա ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության բակալավրիատի բաժնի վարիչ, Աշխարհագրության 005 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար, ԵՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի տեղակալ, ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քարտուղար, ԵՊՀ աշխարհագրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Միյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների դասախոս, մշակութային ծրագրերի պատասխանատու, ՀՀ ԿԳ նախարարություն, Կադրերի բաժնի առաջատար մասնագետ, ՀՀ ԿԳՆ Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող, գիտքարտուղար, ԵՊՀ հեռակա ուսուցման «Աշխարհագրություն» առարկայի ընդունելության հանձնաժողովի նախագահ, Դպրոցականների օլիմպիադայի հանրապետական փուլի «Աշխարհագրություն» առարկայի հանձնաժողովի նախագահ, Աշխարհագրության ուսուցիչ պաշտոնները: Հրատարակված հոդվածների ոլորտներն են աշխարհագրության, դպրոցական աշխարհագրության բովանդակություն, կառուցվածք, գիտելիքի ստուգում, մեթոդիկա: Հանդիսանում է Հայկական աշխարհագրական ընկերության անդամ: Անցել է ՈԱԱԻ վերապատրաստումները, եղել է փորձական ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի անդամ:

**Աննա Երզինյան** Ստացել է բանասիրության ոլորտում դիպլոմավորված մասնագետի որակավորում: Արվեստաբանության գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրա (1981թ. Մոսկվա): 2004թ.-ին ՀՀ ԲՈՀ-ի կողմից ստացել է դոցենտի, 2008-ին՝ պրոֆեսորի գիտական կոչում, իսկ 2011թ.-ին՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում: Հետազոտությունները և հրատարակված հոդվածներն ընդգրկում են արվեստի՝ կինոյի, թատրոնի ոլորտները: Երկու գրքի հեղինակ է: Աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրած պաշտոններն են՝ ստեղծագործական մասնաճյուղերի նախագահ /Հայաստանի կինոգործիչների միություն/, ՀՀ կինոգործիչների միության վարչության քարտուղար, ԵԹԿՊԻ ուսումնագիտական գծով պրոռեկտոր, այժմ ԵԹԿՊԻ Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի դեկանն է: Հանդիսանում է ԵԹԿՊԻ գիտական խորհրդի անդամ, ԵԹԿՊԻ ռեկտորատի անդամ, ՀՀ կինեմատագրաֆիստների միության անդամ, Կինոզեմբլի ասոցացիայի անդամ, Ֆիլպրիսի միջազգային կազմակերպության անդամ, ՀՀ մշակույթի նախարարության նախարարի առթեր խորհրդի անդամ, ՀՀ պետական մրցանակների հանձնաժողովի անդամ, Ֆրիտոնֆ Նանսենի հիմնադրամի հոգեբարձուների խորհրդի անդամ և այլն: Մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների արվեստի և մասնագիտական կրթության ոլորտներում: Անցել է ՈԱԱԿ-ի վերապատրաստումները:

**Grzegorz Kurzyński** (born: February 23, 1949 in Poznań – Poland) is a graduate of the Karol Lipiński Academy of Music in Wrocław (Poland), under the tutelage of Professor Włodzimierz Obidowicz. He has also earned degrees from the Royal Conservatory of Music in Brussels where he studied under Professor Jean Claude Vanden-Eynden, and the prestigious Juilliard School of Music in New York, where he studied under Professor Joseph Kalichstein and Professor Abbey Simon. He was awarded fellowships by Belgium's Ministry of Culture as well as The Barbara Piasecka-Johnson Foundation in the



United States, and also received a scholarship from the outstanding American pianist Malcolm Frager.


**Professional and academic experience:** He has been teaching piano since 1972 at the Karol Lipiński Academy of Music in Wrocław and the Ignacy Jan Paderewski Academy of Music in Poznań (Poland), has been the head of the piano section of the Academy of Music in Wrocław and Rector of the Karol Lipiński Academy of Music in Wrocław (2002-2008). Since 2008 he is Rector's Plenipotentiary for Integration with the European Higher Education Area (equivalent to Vice-Rector's duties and responsibilities).

**Membership in Councils and Boards** Member of the Polish Council on Art Education (2002-2004); Member of the Accreditation Commission – Bologna Process of the Conference of Rectors of Academic Schools in Poland (CRASP); Head of the Accreditation Commission of Schools of Art in Poland (AKUA) (2002-2008); Deputy head of the Conference of Rectors of Universities of Art in Poland (KRUA) (2005-2008); Expert in defining standards in instrumental education, jazz and stage music on the Polish Council on Higher Education; Member of the Economic Committee of the Conference of Rectors of Academic Schools in Poland; Member of the Panel for Creating a Model of Academic Advancement; Member of the board of the European higher schools of art network CHAIN; Member of the Accreditation Commission – Bologna Process of the Conference of Rectors of Academic Schools in Poland (CRASP); Member of the Polifonia Bologna working group (2004-2007) within the framework of the Association Européenne des Conservatoires, Académies de Musique et Musikhochschulen (AEC), AEC Tuning Counselor; Member of the AEC Polifonia Accreditation working group (2007-2010); Member of the AEC Accreditation Committee (2011-) Member of the panel for creating procedures and criteria of academic output evaluation at the Polish Ministry of Science and Higher Education; Member of the Polish National Accreditation Commission; Head of the Ministry of Science and Higher Education working group preparing and implementing the National Qualification Framework for higher artistic education, Member of the Main Council of Higher Education in Poland.

**Mist Thorkelsottir. Education:** M.A. in music, Boston University, Boston MA, U.S.A. Studies with Lucas Foss. 1983 Studies in composition at SUNY at Buffalo, Lejaren Hiller and Morton Feldman. 1982 One term at the University of Minnesota, composition and linguistics. 1982 B.A. in music, Hamline University St. Paul, MN, U.S.A. 1981 Course in children's theater at St. Catherine's College, St. Paul, MN U.S.A. 1980 Student exam, music, ancient and modern languages

**Positions:** 2001 - Dean of Music, Iceland Academy of the Arts. 2001 – 2005 Teacher of composition, Iceland Academy of the Arts. 2001 Project manager in founding a music department at the Iceland Academy of the Arts. 1999 Hired to make suggestions about forming a university level music department in Iceland. 1998 – 1999 Teacher at the Reykjavik College of Music, theory and composition. 1984 – 1989 Teacher at Gardabaer Music School, music history, theory and piano


1986 – 1988 Teacher at Reykjavik Music School, theory. **Committees:** 2011- Chair of AEC Quality Enhancement Committee. 2006 - Council member of AEC, Association Européenne des Conservatoires. 2005 – 2008 General Secretary of ANMA, Association of Nordic Academies. 2001 - Council members of ANMA, Association of Nordic Academies. 2005- On the board of "Music in the Schools". 2003- On the governing board of the Icelandic government "artist salary committee", issuing grants and stipends to individual artists, theatre companies and ensembles of all disciplines, besides supervising all the artists salary funds. 1998- 2008 On the board of the Icelandic Composer's Society. 2000-2005 On the program committee for the Reykjavik Arts Festival. 1998-2002 Head of Iceland Music Information Center, policy making for the MIC and hiring of managers staff. 1984-1990 On the board of Musica Nova Iceland. 1984-1989 On the board of Young Nordic Music Days, organized the festival in Iceland 1987. **Music research, articles and lectures:** Hafliði Hallgrímsson Poemi, publisher Florian Noetzel Verlag 1997. 1993, one of five participants in a live broadcast panel discussion at the World Harp Congress in Copenhagen. 1999, guest lecturer at Brown University, RI, U.S.A. 2000, designed a summer music composition course for the Reykjavik Cultural Center, Gerduberg Papers written and presented to the Ministry of Education and Culture on the structuring and curriculum of the Music Department at Iceland Academy of the Arts.





*Compositions: List of works performed during the last 20 years, available through the Iceland Music Information Center, ITM (mic.is)*

**Սոնա Տեք-Մինասյան**, 2012թ.-մինչ օրս Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գեղարվեստական կրթություն» ֆակուլտետի երաժշտության բաժնի մագիստրատուրայի ուսանող, 2008-2012թթ ՆՊՄՀ Բակալավրի աստիճան, ֆակուլտետ՝ «Գեղարվեստական կրթություն», բաժին՝ «Երաժշտական կրթություն», Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական ուսումնարան, Որակավորումը՝ կոնցերտմայստեր, համույթի կատարող, երաժշտական դպրոցի դասատու, 2008թ.-ից մինչ օրս «Ավե Մարիա» երգչախումբ, որպես երգչուհի: Մասնակցել է Երաժիշտ-կատարողների միջբուհական մրցույթ-փառատոնին, International Students Forum, ՄԱԿ-ի դասընթացներին:



**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի  
փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում  
իրականացնող խմբի այցի  
30.09.2013թ. – 4.10.2013 թ.

30.09.2013թ.


|   |   | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---------|-------|-------------|
| 1 | Փորձագիտական խմբի հանդիպում   | 9:15    | 9:45  | 30 րոպե     |
| 2 | Հանդիպում ռեկտորի հետ   | 10:00   | 10:30 | 30 րոպե     |
| 3 | Հանդիպում ինքնավերլուծությունը իրականացրած աշխատանքային խմբի հետ                          | 10:30   | 11:45 | 75 րոպե     |
| 4 | Հանդիպում պրոռեկտորների հետ   | 11:45   | 12:45 | 60 րոպե     |
| 5 | Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)  | 12:45   | 13:45 | 60 րոպե     |
| 6 | Ռեսուրսների դիտարկում /ուսանողների կատարումներ՝ տեղացի/                                   | 14:00   | 14:45 | 45 րոպե     |
| 7 | Հանդիպում ղեկանների և ուսումնական գործընթացի կառավարման ստորաբաժանումների ղեկավարների հետ | 15:00   | 16:00 | 60 րոպե     |
| 8 | Փորձագիտական խմբի քննարկումներ  | 16:00   | 17:30 | 90 րոպե     |

1.10.2013թ.

|   |  | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|--|---------|-------|-------------|
| 1 | Փորձագիտական խմբի հանդիպում  | 9:00    | 9:30  | 30 րոպե     |
| 2 | Հանդիպում Ռրակի ներքին ապահովման բաժնի հետ   | 9:30    | 10:30 | 60 րոպե     |
| 3 | Հանդիպում ամբիոնների վարիչների հետ   | 10:45   | 11:45 | 60 րոպե     |
| 4 | Հանդիպում ուսանողության ներկայացուցիչների հետ /տեղացի և արտասահմանցի, մագիստրատուրայի ուսանողներ/            | 11:45   | 12:45 | 60 րոպե     |
| 4 | Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)   | 12:45   | 13:45 | 60 րոպե     |
| 5 | Ռեսուրսների դիտարկում /գրադարան, ձայնադարան, հրատարակչություն, ֆուկլորագիտության մաս, օպերային ստուդիա, .../ | 14:00   | 15:30 | 90 րոպե     |
| 6 | Հանդիպում ուսանողական խորհրդի և ՈւԳԸ ներկայացուցիչների հետ   | 15:45   | 16:15 | 60 րոպե     |
| 7 | Փորձագիտական խմբի քննարկումներ   | 16:30   | 18:00 | 90 րոպե     |

2.10.2013թ.

|   |  | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|--|---------|-------|-------------|
| 1 | Փորձագիտական խմբի հանդիպում  | 9:00    | 9:30  | 30 րոպե     |
| 2 | Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ                                       | 9:30    | 10:45 | 75 րոպե     |
| 3 | Բաց հանդիպում  | 11:00   | 11:30 | 30 րոպե     |
| 4 | Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ                                     | 11:45   | 13:00 | 75 րոպե     |
| 4 | Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)   | 13:00   | 14:00 | 60 րոպե     |
| 5 | Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ                                  | 14:15   | 15:30 | 75 րոպե     |
| 6 | Ռեսուրսների դիտարկում /ազգային նվագարաններ, արտասահմանցի ուսանողների կատարումներ / | 15:30   | 16:30 | 60 րոպե     |
| 7 | Փորձագիտական խմբի քննարկումներ   | 16:30   | 18:00 | 90 րոպե     |



Այցելություն Գյումրու մասնաճյուղ

3.10.2013թ.

|    |  | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|----|--|---------|-------|-------------|
| 1  | Փորձագիտական խմբի մեկնումը Գյումրի                                 | 8:30    | 10:30 | 120 րոպե    |
| 2  | Հանդիպում մասնաճյուղի տնօրենի հետ                                  | 10:45   | 11:00 | 15 րոպե     |
| 3  | Հանդիպում վարչական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների հետ | 11:15   | 12:15 | 60 րոպե     |
| 4  | Հանդիպում Ուսխորհրդի, ՈւԳԸ-ի և ուսանողության ներկայացուցիչների հետ | 12:30   | 13:30 | 60 րոպե     |
| 5  | Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)                         | 13:30   | 14:30 | 60 րոպե     |
| 6  | Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ                  | 14:45   | 15:45 | 60 րոպե     |
| 7  | Ռեսուրսների դիտարկում  | 16:00   | 17:00 | 60 րոպե     |
| 8  | Փորձագիտական խմբի քննարկումներ                                     | 17:00   | 17:45 | 45 րոպե     |
| 9  | Հանդիպում մասնաճյուղի տնօրենի հետ                                  | 17:45   | 18:00 | 15 րոպե     |
| 10 | Մեկնում Գյումրիից  | 18:00   | 20:00 | 120 րոպե    |

4.10.2013թ.

|   |  | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|--|---------|-------|-------------|
| 1 | Փորձագիտական խմբի հանդիպում  | 9:00    | 9:30  | 30 րոպե     |
| 2 | Հանդիպում փորձագետների կողմից ընտրված կազմի հետ                          | 9:30    | 10:30 | 60 րոպե     |
| 3 | Ռեսուրսների դիտարկում / Փաստաթղթերի ուսումնասիրություն, քննարկումներ/    | 10:45   | 11:45 | 60 րոպե     |
|   | Փորձագիտական խմբի քննարկումներ   | 11:45   | 12:45 | 60 րոպե     |
| 4 | Ընդմիջում (փորձագիտական խմբի քննարկումներ)                               | 13:00   | 14:00 | 60 րոպե     |
|   | Փորձագիտական խմբի քննարկումներ   | 14:00   | 15:00 | 60 րոպե     |
| 5 | Ռեսուրսների դիտարկում /երիտասարդական նվազախումբ, նախապատրաստական խմբեր / | 15:15   | 16:00 | 45 րոպե     |
| 6 | Հանդիպում ռեկտորի հետ  | 16:00   | 16:30 | 30 րոպե     |
| 7 | Փորձագիտական խմբի ամփոփիչ քննարկումներ                                   | 16:30   | 18:00 | 90րոպե      |


«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ  
Տնօրեն Ա. Թովմյան



27.09.2013 թ.

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա







**ԱՅՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ**

| N   | Փաստաթղթի անվանումը   | Չափանիշը |
|-----|---|----------|
| 1.  | ԵՊԿ առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ (փաստաթղթեր)1  | 1        |
| 2.  | Ռեկտորի վերջին հաշվետվությունը խորհրդին   | 2        |
| 3.  | Ուսումնական մասի կանոնակարգ   | 2        |
| 4.  | Ֆակուլտետի /ների/ տարեկան հաշվետվություններ   | 2        |
| 5.  | Բուհի կառուցվածքային փոփոխություն իրականացնելու ռեկտորի հրաման  | 2        |
| 6.  | Պետական կրթական չափորոշիչը  | 3        |
| 7.  | Ուսումնական պլաններ   | 3        |
| 8.  | Առարկայական ծրագրեր   | 3        |
| 9.  | Քննական և ստուգարքային տեղեկագրեր   | 3        |
| 10. | Լրացուցիչ կրթության ուսումնական պլան  | 3        |
| 11. | Բակալավրիատի և մագիստրատուրայի դիպլոմների հավելվածներ   | 3        |
| 12. | ԵՊԿ ընդունելության կարգ   | 4        |
| 13. | Գովազդային բուկլետներ, հայտարարությունների տեքստեր  | 4        |
| 14. | Բուհի և ուսանողի միջև կնքվող պայմանագիր   | 4        |
| 15. | Ուսման վարձերի գեղջման և նպաստների տրամադման կանոնակարգ   | 4        |
| 16. | Ուսումնառողների իրավունքների պաշտպանության և օրինականության պահպանման հանձնաժողով ստեղծելու մասին որոշումը              | 4        |
| 17. | ՈւՄ աշխատանքային պլան   | 4        |
| 18. | Կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, ավարտական թեզեր  | 4        |
| 19. | ԵՊԿ-ում Աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու կարգապահական տույժի ենթարկման ընթացակարգ | 5        |
| 20. | Ամբիոնային ծանրաբեռնվածություններ   | 5        |
| 21. | Մի քանի ամբիոնի տարեկան աշխատանքային պլան   | 5        |





|     |  |    |
|-----|--|----|
| 22. | ԵՊԿ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված գիտական ոլորտի զարգացման ռազմավարությունը  | 6  |
| 23. | Գիտական խորհրդի արձանագրություն /ներ   | 6  |
| 24. | ԵՊԿ-ի Գիտական խորհուրդի կողմից հաստատված ԵՊԿ-ի գիտական պարբերականներում հրատարակման ենթակա հետազոտություններին ներկայացվող տեխնիկական և այլ չափանիշների հայեցակարգ | 6  |
| 25. | «ԵՊԿ դասախոսների գիտամեթոդական հոդվածների և ուսումնամեթոդական աշխատանքների ժողովածու»  | 6  |
| 26. | «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության» գիտական լաբորատորիայի կանոնակարգ   | 6  |
| 27. | «Երաժիշտ» թերթ, «Երաժշտական Հայաստան» ամսագիր  | 8  |
| 28. | Օտարերկրյա տարբեր ուսումնական հաստատությունների հետ կնքված համաձայնագրեր և պայմանագրեր՝ գիտական հետազոտությունների վերաբերյալ սահմանված կետերով:                   | 9  |
| 29. | Եվրոպական Կոնսերվատորիաների Ասոցիացիայի լիիրավ անդամության հետ կապված փաստաթղթեր   | 9  |
| 30. | ՈՆԱԲ ռազմավարությունը  | 10 |
| 31. | ՈՆԱԲ աշխատանքային պլանը  | 10 |
| 32. | Որակի բաժնի կողմից կազմած ուղեցույցներ   | 10 |
| 33. | Հարցաթերթիկներ և դրանց արդյունքների վերլուծություններ  | 10 |
| 34. | Շահառուների հարցազրույցների, սոցիալոգիաների վերլուծություններ/   | 10 |



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵՐԸ

1. Գրադարան և ընթերցասրահ
2. Ձայնադարան
3. Հրատարակչություն,
4. Ֆուկլտրագիտության ամբիոն
5. Օպերային ստուդիայի փորձ
6. Ազգային նվագարանների ամբիոն
7. Երիտասարդական նվագախմբի փորձ
8. «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրության»  
գիտական լաբորատորիա
9. Ոսումնամեթոդական վարչություն
10. Գյումրու մասնաճյուղ

